



ՃԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ
ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԳՊՄՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**Մեր Համալսարանը
հնի և նորի համալիր
գաղափարակիրն է**

2020Թ-Ի 1-ԻՆ ՆԻՍՏՈՒՄ ՈՒՐՎԱԳԾՎԵՑԻՆ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՆՈՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Այսօր անցկացվեց Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորատի՝ տարեսկզբյան, առաջին նիստը: Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը, ռեկտորի Ժ/պ Եղիազար Վարդանյանը տեղեկացրեց, որ արդեն իսկ մշակման փուլում է համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների՝ 2020-2023թթ. ծրագիրը: Այնուհետև ընդգծեց այն բոլոր առաջնահերթ միջոցառումները, որոնք ուղղված են ուսման որակի բարձրացմանը: Այս համատեքստում էլ հանձնարարականներ տվեց բոլոր ստորաբաժանումներին՝ ներկայացնել իրենց առաջիկա ծրագրերն ու անելիքները: Նիստի՝ ոչ պակաս կարևոր, արդիական և բազմիցս արծարծված դրվագներից էր նաև դիպլոմային աշխատանքների թեմաների կրկնությունը բացառելու նպատակով բազայի ստեղծման հարցը, բակալավրիատի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների՝ գիտական հոդվածներով հանդես գալը խթանելու և գիտական մամուլում տպագրվելուն օժանդակելու կարևորությունը:



ԱՄՓՈՓԵԼՈՎ ԿԱՏԱՐՎԱԾԸ ԵՎ ՆԱԽԱՆՇԵԼՈՎ ՀԵՏԱԳԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ. ԱՆՑԿԱՑՎԵՑ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԱՏ

Հունվարի 31-ին տեղի ունեցավ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Գիտական խորհրդի տարեսկզբյան, անդրանիկ նիստը: Նիստի օրակարգում, ընդգրկված էին՝ համալսարանի ռեկտորի տարեկան հաշվետվությանը, համալսարանի կառուցվածքում փոփոխություններ կատարելը, ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորում ստանալու ծրագրի հայտերը, ատենախոսական թեմաների և գիտական ղեկավարների հաստատումը:

Խորհրդի նիստը, ռեկտորի ժ/պ պարոն Վարդանյանը սկսեց համալսարանի՝ 2020թ-ի այն առաջնահերթություններով, որոնք բազմիցս նշվել են՝ որպես թիրախային: Ներկայացնելով համալսարանի կառուցվածքը, ավարտված, ընթացիկ և սպասվող ծրագրերը, միջազգային համագործակցությունները, համալսարանի գիտահետազոտական գործունեությունը, անցկացված միջոցառումներն ու գիտաժողովները, ռեկտորի պաշտոնակատարը շեշտադրեց այն 3 առաջնահերթությունները, որոնց հենքով այսուհետև ծավալվելու է համալսարանի գործունեությունը:

Դրանք են՝ ուսման որակի բարձրացումը և ուսումնական պլանների առարկայական վերանայումը, գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացումը ինչպես նաև հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը: Ներկայացվեց նաև եվրոպական ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը վերսկսելու անհրաժեշտությունը:



Անդրադառնալով համալսարանի կառուցվածքային փոփոխություններին՝ պարոն Վարդանյանը նշեց, որ այդ կառուցվածքային ու կադրային փոփոխությունները հետապնդում են ոչ

թե տնտեսման, այլ կրթության արդյունավետության բարձրացման միտում: Այս համատեքստում ներկայացվեց համալսարանի՝ նորացված կառուցվածքի նախագիծը, պրոռեկտորների ենթակայության տակ գտնվող միավորները և վերջիններիս գործառնությունները:

ՃՀԱՀ ղեկավարի ժ/պ Եղիազար Վարդանյանը ներկայացրեց նաև համալսարանի 2019թ-ի բյուջեի կատարողականը, 2020թ-ի բյուջեի պլանավորումը և ղեկավարի պաշտոնակատարի պաշտոնում հրամանագրվելու օրվանից՝ դեկտեմբերի 2-ից առայսօր համալսարանի իրականացրած ծախսերը:

Հիշեցնենք նաև, որ վաղը՝ հունվարի 31-ին, ժամը 17:00-ին, ՃՀԱՀ 2023 դահլիճում տեղի կունենա

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի հերթական նիստը:

ԽԱՉԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ՝ ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ

Բարձր առաջադիմությամբ և ուսանողական ակտիվ կենսակերպով աչքի ընկնող ուսանողները մշտապես արժանանում են մեր համալսարանի ուշադրությանն ու խրախուսանքին: Հենց այս սկզբունքներով էլ յուրաքանչյուր տարի ընտրվում է լավագույն ուսանողը: Հունվարի 31-ին ամփոփվեց «Տարվա լավագույն ուսանող-2019» մրցույթը: Եվ, մեծ ուրախությամբ ու հպարտությամբ հայտնում ենք, որ այս պատվավոր անվանակարգում հաղթող ճանաչվեց Զաղաքային տնտեսություն և Էկոլոգիա ֆակուլտետի Ուսանողական խորհրդի նախագահ Խաչատուր Խաչատրյանը: Հաղթանակի առթիվ՝ նրան անձամբ շնորհավորեց և պարգևատրեց ՃՀԱՀ ղեկավարի ժ/պ Եղիազար Վարդանյանը:



Շնորհավորում ենք մեր օրինակելի ուսանողին և ընկերոջը՝ մաղթելով նորանոր հաջողություններ և մասնագիտական ձեռքբերումներ:

ՃՀԱՀ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆՈՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 1-ին ՃՀԱՀ-ում կայացավ հոգաբարձուների խորհրդի նիստը՝ հիմնական զեկուցողներն էին Հոգաբարձուների խորհրդի նախագահ Վլադ Ասատրյանը և ՃՀԱՀ ղեկավարի ժ/պ Եղիազար Վարդանյանը: Կարևորելով համալսարանի աշխատակիցների դերի բարձրացումը, աշխատանքներում նրանց ներգրավվածության ընդլայնումը, ինչպես նաև գիտական ներուժի զարգացումը և աշխատակիցների աշխատավարձերի բարձրացման հարցերը Ճարտարապե-

տության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՀՅԱՀ) վերանայում է իր քաղաքականությունը:

Նիստին ներկայացվեց և քննարկվեց, 2019թ-ի բյուջեի կատարողականի և 2020թ-ի բյուջեի պլանավորման, գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացման ու գիտական ծրագրերում համալսարանականների՝ առավելագույն թվով ներգրավվածության բարեփոխված ծրագրերը ինչպես նաև համալսարանի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունները՝ առաջարկվեց կրճատել Ֆինանսատնտեսական և տեղեկատվական գծով պրոռեկտորի հաստիքը, համալսարանական ամբիոնները համապատասխանաբար բաշխել ֆակուլտետների միջև, ավելացնել գիտական քաղաքականության վարչություն, ինչպես նաև լեզուների կենտրոն, որը կգբաղվի դասախոսների և ուսանողների վերապատրաստումներով, գիտական հոդվածների և կայքի նորությունների թարգմանություններով: Այս համատեքստում առաջարկվեց որոշակի բաժիններ լուծարել և միավորել վարչությունների մեջ:



Հաստատված կառուցվածքային փոփոխությունները վերջին երկու ամսում քննարկվել են համալսարանի բոլոր ստորաբաժանումներում՝ ներկայացրել են առաջարկներ, որոնց հիման վրա կազմվել է կառուցվածքային փոփոխությունների օպտիմալացման նոր ծրագիր:

Համալսարանում դեկանատների և ամբիոնների դերը բարձրացնելու նպատակով՝ որոշում կայացվեց բոլոր դեկանատներին բյուջեով 8 միլիոն դրամ հատկացնել՝ ընթացիկ գիտաժողովներ, միջոցառումներ և ծրագրեր իրականացնելու համար, իսկ գիտական կյանքի ակտիվացման նպատակով սահմանել ներհամալսարանական գիտական դրամաշնորհներ: Ռեկտորի պաշտոնակատարը նշեց, որ այսուհետև խիստ կարևորվելու է ուսանողների և համալսարանի բոլոր թողարկող ամբիոնների ներգրավվածությունը գիտական ծրագրերում՝ առավելագույնս օգտագործելով սեփական գիտական ներուժը:

Հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից հավանության արժանացան և հաստատվեցին ներկայացված ծրագրերը: Խորհրդի անդամները նկատեցին, որ բարեփոխումների

փաթեթը ուղղված է ուսման որակը, աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելուն և համալսարանի գործունեությունն առավել թափանցիկ ու նպատակային դարձնելուն:

ՆՐԱՆՔ ԱՊԱՑՈՒՅՈՒՄ ԵՆ, ՈՐ ՃԱՐՏԱՐԱԴԵՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՐԸ ՏԱՐԻՔ ՉԻ ՀԱՐՑՆՈՒՄ

«Թամանյանի թոռնիկը՝ Գայանե Թամանյանը, իմ դասընկերուհին էր: Երբ գնում էինք իրենց տուն, պահարանի վրայից իջեցնում էինք Թամանյանի նախագծերը և ժամերով նայում»։ սերը ճարտարապետության և ստեղծագործելու նկատմամբ Կարեն Ռաշիդյանցի մոտ ծնվել է դեռևս դպրոցական տարիներից, ինչպես ինքն է ասում, բոլոր տետրերի կազմերին օպերայի նկարներն էին, անընդհատ նկարում ու գծում էր: Տարիքի հետ այդ սերն ու աշխատանքի հանդեպ սիրահարվածությունն ավելի է մեծացել:

Այս տարի ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի դեկան Սարգիս Թովմասյանը և ճարտարապետության և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոնի վարիչ, վաստակավոր ճարտարապետ, պրոֆեսոր Կարեն Ռաշիդյանը համալսարանի գլխավոր հոբեյարներն են: Ծննդյան 70 ամյակի առթիվ պարոն Թովմասյանը, համալսարանի կողմից, պարգևատրվեց «Զիմ Թորոսյան», իսկ պարոն Ռաշիդյանը՝ 75 ամյակի առթիվ, «Արթուր Թարխանյան» ոսկե մեդալներով:



Այն գիտակցությամբ, որ տարիները մարդուն ոչ միայն ավելորդ ու անցանկալի կնճիռներ, այլ նաև՝ իմաստություն են նվիրում, այդուհանդերձ, զրույցից առաջ հստակ որոշեցի, որ տարիքի մասին խոսակցությունը կսահմանափակվի միայն տարեդարձն ու մեդալները շնորհավորելով: Սակայն, երբ պարոն Թովմասյանը ժպիտով և գործընկերոջ նկատմամբ անկեղծ հիացմունքով նկատեց, որ Ռաշիդյանցը միայն 7.5 անգամ 10-ը տարեկան է, հասկացա, որ նրանց համար տարիքը ոչ թե թվերի հաջորդականություն է, այլ կյանքի հերթական հետաքրքիր փուլ:

«Երբ արթնանում և անմիջապես հիշում եմ, որ այսօր ուսանողներին պետք է որևէ նոր ճարտարապետի մասին պատմեմ, անմիջապես ապրելս գալիս է: Այո՛, ապրեցնող է այն միտքը, որ դու դեռ մարդկանց պետք ես, որ դեռ չես սպառվել և ասելիք ունես»։ այս բանաձևով է

յուրաքանչյուր օր ուսանողների սիրելի պարոն Ռաշիդյանցը գալիս աշխատանքի, գալիս է, որպեսզի երիտասարդների հետ գրուցի գրականությունից, երաժշտությունից, ճարտարապետությունից, մարդկային ազնիվ ու վեհ զգացմունքներից և, ինչպես Թովմասյանն է նկատում, կատարի իր գործը միայն իրեն հատուկ պատանեկան եռանդով ու ոգևորվածությամբ:

«Համաձայն ես, չէ՞, Թովմասյան, բա այլ կերպ հնարավոր չէ, ախր ճարտարապետությունը սեր է, նվիրում, երաժշտություն, եթե ճարտարապետը գիշերը չի արթնանում ու մատիտը ձեռքը վերցնում, ուրեմն իսկական ճարտարապետ չէ», – ասում է՝ միաժամանակ ինքն իրեն նկատողություն անելով, որ շատախոսում է և թույլ չի տալիս գործընկերոջը նույնպես կարծիք հայտնել: «Ի ուրախություն մեզ՝ ասելիքդ շատ է, որովհետև ճարտարապետությունն, իսկապես, շշմելու արվեստ է, թույն, վարակ, որը, եթե հայտնվում է մարդու մեջ, այլևս ազատվել չի լինում, ամբողջ կյանքի համար է», – նկատում է պարոն Թովմասյանը:

ճարտարապետության առեղծվածը բնութագրելու համար, թերևս, անհնար է գտնել ավելի պերճախոս արտահայտություն, քան Սարգիս Թովմասյանինն է. հաճախ է ասում. «ճարտարապետությունն աստվածային մասնագիտություն է»: Բացատրությունն էլ նույնքան համոզիչ ու սիրուն է. «Նայեք պատուհանից, սարի գլխից, երկնքից, ի՞նչ եք տեսնում՝ ամենուրեք Աստծո ստեղծածն է ու ճարտարապետի մտքի արգասիքը: Ուրիշ բան չկա: Մնացած ամեն ինչ գնում-գալիս է: Միայն ճարտարապետությունն է կանգուն, որը հենց բնական միջավայրի շարունակությունն է»:

Նկատեցի, թե ինչպես փոխվեց գրուցակիցներիս դեմքի արտահայտությունն ու ոգևորվածությունը, երբ հարցրի, թե ինչ միջավայրի և գույների մեջ է ապրում այսօրվա Երևանի ճարտարապետությունը: Պատասխանները լակոնիկ, բայց խորը, դիպուկ և հուսադրող էին.

«Հիմա դալտոնիկ է դարձել ճարտարապետությունը... Երևանը միայնակ ու խորթ շենքերի քաղաք է դարձել՝ առանց երկխոսության... Բայց հույս ունենք, որ ժամանակն ամեն ինչ իր ճիշտ տեղը կգցի»: Ասում են՝ արևմտյան ճարտարապետության հետևից գնալով ուզում ենք երկնաքերեր կառուցել, որոնք ծիծաղելի են և ոչ մի առնչություն չունեն զարգացման հետ: Մեր երկրում ռիսկի գործունը շատ մեծ է և, հիշելով, որ բոլոր ժամանակների բացարձակ արժեքը մարդն է, հետևաբար պետք է կառուցենք՝ առաջնորդվելով ամրություն, օգտակարություն, գեղեցկություն սկզբունքով՝ չմոռանալով հանդերձ, որ յուրաքանչյուր բնական վտանգ սպառնում է մեր լիովին ոչնչացմանը:

«Գիտե՞ք, ճարտարապետությունը պետք է ագրեսիվ չլինի, փողոցով քայլելիս աչք չծակի, իսկ այդպիսին է միայն գրագետ և միջավայրին ձուլված կառույցը: Այն նկար չէ, որ վատ ստացվելու դեպքում պատռես և դեն նետես, այն մնայուն է», – ասում է պարոն Ռաշիդյանցը և հավելում, որ կառույցը կարող է ֆիզիկապես մաշվել, բայց բարոյապես պարտավոր է պինդ լինել: Միայն այսպիսի ճարտարապետությունը, տվյալ ժամանակաշրջանի պատմության ու մարդկային փոխհարաբերությունների մասին պատմող ճարտարապետությունը կարող է մարդկանց և, ապա, հենց ճարտարապետին երջանկացնել:

«Պատվոգրերը, տարբեր գույների թղթերը, մեդալներն ու վաստակավորի կոչումները չեն, որ երջանկացնում են ու դառնում ճարտարապետի ծափահարությունները: Պրոֆեսորն այն ժամանակ է պրոֆեսոր, երբ դրա մասին ասում են կողքինները՝ առանց դրա մասին վկայող մեդալները տեսնելու...», «Ելի շատ եմ խոսում, չէ՞, Թովմասյան, ոչինչ, դու ինձանից 5 տարով փոքր ես, դեռ ժամանակ ունես...»:

Երազանքներ: Շատ չեն, ասում է Կարեն Ռաշիդյանցը, ես արդեն երջանիկ եմ՝ ունեմ հոյակապ ընտանիք, սիրելի աշխատանք և լավ շրջապատ, միայն ուզում եմ շահ-շահ թոռներ ունենալ: Իսկ ահա մի երազանք ընդհանուր է՝ որպես ճարտարապետ և քաղաքացի, երազում են, որպեսզի Հայաստանի ճարտարապետությունը մի օր վերջապես բավարարի հուսալիության, ամրության ու կայունության պահանջներին:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԻ ԴԵՄ՝ ԱՂՈԹԵԼՈՎ ԵՎ ՆԿԱՐԵԼՈՎ

Փետրվարի 19-ին՝ ՀՀ նկարիչների միությունում, հայ նկարիչները գույների միջոցով Հայաստանի բարոյական աջակցությունն էին հայտնում Չինաստանին՝ կորոնավիրուսի դեմ պայքարում: «Աղոթք՝ Ուհանի բնակիչների համար, մեկ կտավ՝ ի հավաստումն միասնական զորակցության» խորագրով միջոցառմանը, որը կազմակերպվել էր Երևանի Գեղարվեստի պետական ակադեմիայի, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի, ՀՀ նկարիչների միության կողմից, մասնակցում էր նաև ՃՀՀԱՀ-ի դասախոս, ՀՀ ժողովրդական և վաստակավոր նկարիչ Հրանտ Թադևոսյանը (Թաթոսը):



Միջոցառմանը ներկա էին նաև ՀՀ արտաքին գործերի նախարար Չոիրաբ Մնացականյանը և Չինաստանի ժողովրդական Հանրապետության դեսպան Թիան Էրլունը: Վկայակոչելով հայ և չին ժողովուրդների միջև ձևավորված մշակութային կապն ու շարունակական ընթացք ունեցող միջոցառումները՝ ԱԳ նախարարը նշեց, որ այս միջոցառման նպատակը՝ մեր ժողովրդի զորակցությունը և քաջալերանքը հայտնելն է բարեկամ Չինաստանին՝ կորոնավիրուսի դեմ պայքարում: «Հիացմունքի է արժանի այս մարտահրավերներին դիմակայող չին ժողովրդի վճռականությունը», - ընդգծեց նախարարը՝ հույս հայտնելով, որ Չինաստանի կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումները մոտ ապագայում թույլ կտան հաղթահարել ստեղծված իրավիճակը: Դեսպան Թիան Էրլունն իր և չին ժողովրդի անունից իր երախտագիտությունը հայտնեց միջոցառման կազմակերպիչներին՝ նշելով, որ «Աղոթք» կտավն արտահայտում է Հայաստանի աջակցությունը չին ժողովրդին: Միջոցառման ավարտին՝ ՀՀ ժողովրդական ու վաստակաշատ նկարիչների և տաղանդավոր ուսանողների կողմից ստեղծված «Աղոթք» կտավը, ի նշան չին ժողովրդի նկատմամբ հարգանքի ու զորակցության, հանձնվեց ՀՀ Չինաստանի դեսպանություն:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԵՐԱԶՄՈՒԹՅԱՆ+ AII4R&D ՆԱԽԱԳԾԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

«Համագործակցային, ազատ և նորարարական հարթակի միջոցով ակադեմիա –բիզնես համագործակցության խթանումը՝ հանուն հետազոտության և զարգացման» Երազմութիւն + AII4R&D Նախագծի մշտադիտարկման այցի շրջանակում Հայաստանում Երազմութիւն+ ազգային գրասենյակի ծրագրի համակարգող Լանա Կառլովան և ծրագրի պատասխանատու Էդիթ Սողոմոնյանը մշտադիտարկման այցով Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էին:

Այցի ընթացքում նրանք հանդիպում ունեցան ՃՇՀԱՀ ռեկտորի պաշտոնակատար Եղիազար Վարդանյանի հետ՝ քննարկելով կրթական, հետազոտական և գիտական նախադրյալները՝ Երազմութիւն+ ծրագրի տարբեր նախագծերի շրջանակում: Տեղի ունեցավ նաև հանդիպում և Նախագծի բազմաբովանդակ քննարկում AII4R&D Նախագծի հայաստանյան բուհերի համակարգողների, կոնտակտային անձանց և թիմ-անդամների հետ: AII4R&D Նախագծի ՃՇՀԱՀ համակարգող Գոհար Ավետիսյանը և Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտի Նախագծի կոնտակտային անձ Ռուզաննա Սարգսյանը համատեղ ներկայացրեցին այս երկու հաստատություններում AII4R&D Երազմութիւն+ Նախագծի ներկայիս վիճակի վերաբերյալ տեղեկատվություն:



Նույն ձևաչափով հանդես եկան Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի և ՀՀ ԳԱ Ինֆորմատիկայի ու ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի Նախագծի կոնտակտային անձինք Գևորգ Մարգարովն ու Սերգեյ Աբրահամյանը: Քննարկման ընթացքում պարզաբանվեցին և հստակեցվեցին մինչ այժմ Նախագծի շրջանակում վերոնշյալ բուհերի ու գիտահետազոտական ինստիտուտների կողմից իրականացված քայլերը:

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՈՒՅԻՆ ԱՐԺԱՆԱՑԵԼ Ե ՀՀ-ՈՒՄ ԱՄԵ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎԻՆ

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը հերթական անգամ հաղթանակ է գրանցել միջազգային հարթակում: Այս անգամ մեր համալսարանի անունը բարձր է պահել Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի «Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Սաթենիկ Մաթևոսյանը: ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպանությունը, ԱՄԵ Ազգային տոնին նվիրված միջոցառման շրջանակներում, պարգևատրել է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների 14 լավագույն ուսանողների, որոնց շարքերում է եղել նաև Սաթենիկը: Դեսպանությունը վերոնշյալ ուսանողներին հնարավորություն է ընձեռել այցելել ԱՄԵ:



Ծրագրի շրջանակներում՝ Նրանք այցելել են Մասդար քաղաք, որտեղ ուսումնասիրել են Մասդարի Գիտահետազոտական կենտրոնը, շրջագայել քաղաքով, ծանոթացել տեղի Նորարարական վերջին լուծումներին՝ առանց վարորդկառավարվող մեքենային, քամու պաշտպանիչ աշտարակին, արևային էներգիայով կառուցված շենքերին և այլն: Ուսանողների համար այցելություններ են կազմակերպվել դեպի աշխարհի շքեղագույն մզկիթներից մեկը՝ Շեյխ Չայիդի մզկիթը, Խալիֆայի համալսարանը, որտեղ ծանոթացել են Ավիատիեզերական հետազոտությունների Նորարարություններին, առողջապահական ոլորտի Նորարարական, Էմիրաթական ICT ինովացիոն կենտրոններին: Այցի վերջում հանդիպում է կազմակերպվել Նաև ԱՄԷ-ում ՀՀ դեսպան Միքեր Մկրտումյանի հետ:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ԱՐՏԱՅԵՐԹ ՆԻՍՏ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՀ Կառավարության՝ մարտի 16-ի որոշմամբ, մինչև ապրիլի 14-ը Հայաստանում հայտարարվեց արտակարգ դրություն՝ կորոնավիրուսի համավարակի տարածմանը խոչընդոտելու և բուժական միջոցառումներն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Այս որոշման շրջանակում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում մարտի 17-ին անցկացվեց ռեկտորատի արտահերթ նիստ, որի ընթացքում քննարկվեց ուսումնական գործընթացի հետագա պլանավորումը:




ZOOM. ԵՐԲ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ Է ԿԱՊՈՒՅՏ ԷԿՐԱՆԸ

Աշխարհը համակած կորոնավիրուսը բավարար պատճառ չդարձավ, որպեսզի ուսանողը, աշակերտը, ուսուցիչն ու դասախոսը մոռանան, որ պակաս կարևոր չէ նաև կրթությունն ստանալն ու փոխանցելը:

Այդպես, արտակարգ դրության պայմաններում, ՃՀԱՀ-ում արտակարգ կերպով կազմակերպվեց առցանց-հեռավար ուսուցում, և արդեն յուրաքանչյուր օր, zoom հեռավար հաղորդակցության հարթակում, դասախոսներն, ըստ դասացուցակի, վարում են իրենց դասը, անկաշկանդ շփվում ուսանողների հետ, քննարկում են ու տեսադասեր կազմակերպում: Ասել է թե՛ լուսավոր 21-րդ դարում, տեղեկատվական գերգարգացած տեխնոլոգիաները լավագույն «մանրեասպան» միջոցն են ուսումնաստենչ ու գիտելիքի անսակարկելի արժեքն իմացող մարդկանց համար:



ZOOM. ՄՈՏԵՑՆՈՒՄ ԵՆՔ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԶԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ



ԿԱՊԵՑԻՆՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՐ

Կարևորելով մեր համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի առողջությունը և հաշվի առնելով նրանց՝ միջինից բարձր տարիքն ու ռիսկային գոտում գտնվելու հանգամանքը՝ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանն ԱՌԱՋԻՆՆ Է հանրապետության բուհերից, որը ձեռք է բերել հատուկ ախտահանիչ սարք:

ԱՒՏԱՀԱՆՄԱՆ ԿԱՄԱՐԸ՝ շնորհիվ Էթիլ սպիրտի, ջրածնի պերօքսիդի, գլիցիրինի և թորած ջրի համալիր ախտահանիչ բաղադրության և հեղուկի եռաչափ արտանետման, լիովին կանխարգելում է նոր կորոնավիրուսի բացիլների տարածումը և ապահովում սարքի միջով անցնող

մարդու անվտանգ մուտքը համալսարան:

Եվ, քանի որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունների ժամանակաշրջան է և ավարտական ատեստավորման հանձնաժողովների մուտքը համալսարան անխուսափելի է, հետևաբար նման ախտահանիչ սարքի առկայությունը, պարզապես, անխուսափելի էր և, այս պարագայում, կենսական նշանակության: Համալսարանում իրականացվում են նաև ստուգման և անվտանգության բոլոր միջոցառումները: Բոլոր այցելուներին նախադրաբար համալսարանի բուժաշխատողները գրանցում են, ջերմաչափում և ստուգում դիմակների ու ձեռնոցների առկայությունը, բացակայության դեպքում՝ տրամադրում:

Մեր համալսարանականների առողջությունը և անվտանգությունը մեզ համար առաջնահերթ է:



ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ 14-ՐԴ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇԱՐՈՒՄ

Ապրիլի 19-ին ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանը հայտարարություն տարածեց Հակաճգնաժամային 14-րդ միջոցառման շրջանակներում ուսանողներին աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

Հայտարարության մեջ, մասնավորապես, ասված է.



1. Պետական բուհերի առկա համակարգի բակալավրիատի, մագիստրատուրայի և օրդինատուրայի 90 և ավել ՄՈԳ ունեցող և ավարտական կուրսում գտնվող ուսանողների կիսամյակի ուսման վարձերը կառավարության կողմից կվճարվեն 100 տոկոսով: 90 և ավելի ՄՈԳ ունեցող ոչ ավարտական կուրսերի ուսանողների կիսամյակային ուսման վարձերը կվճարվեն 75 տոկոսով: Ավարտող ուսանողները ովքեր ուսվարձի պարտք չունեն կարող են հրաժարվել աջակցությունից կամ ստանալ գումարը՝ եթե այն վճարվել է ֆիզիկական անձի կողմից: Իսկ եթե ավարտող ուսանողի վարձը վճարվել է ուսանողական վարկի միջոցով, գումարը կուղղվի վարկի սպասարկմանը: Այսպիսի գումարները կօգտագործվեն այլ ուսանողների վարկավորելու համար:

2. 80-ից բարձր ՄՈԳ ունեցող ուսանողների գործող և նոր տրվող վարկերի տոկոսները 2020 թվականի համար կգրոյացվեն՝ այդ թվում պետության կողմից հավատարմագրում ունեցող բուհերի ուսանողների համար: 80-ից ցածր ՄՈԳ ունեցող ուսանողների համար վարկերի տոկոսները կսուբսիդավորվեն 5 տոկոսով, այսինքն վարկերը հասանելի կլինեն 4 տոկոսով:

3. Ուսանողները վարկի մայր գումարը սպասարկում են բուհն ավարտելուց հետո:


Բարձր գնահատելով և հետևելով ՀՀ Կառավարության և ԿԳՄՍ նախարարության ձեռնարկած հակաճգնաժամային միջոցառումների ընթացքին՝ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի Ժ/պ Եղիազար Վարդանյանը հանձնարարել է՝ կազմել մեր համալսարանում շահառու հանդիսացող այն ուսանողների ցուցակը ովքեր բավարարում են 1 կետում ներկայացվող պահանջներին:

Սիրելի՛ ուսանողներ, ապրիլի 20-ից հասանելի կլինեն ցուցակները և շահառուները կտեղեկացվեն, որպեսզի օգտվեն կառավարության կողմից իրականացվող աջակցությունից, իսկ մնացած կետերին բավարարելու համար հավելյալ տեղեկատվությունը կարող եք ստանալ առցանց եղանակով՝ ձեր համապատասխան ֆակուլտետի դեկանատներից:

Շարունակե՛ք հետևել համալսարանի պաշտոնական կայքէջի հայտարարություններին՝ բուհին վերաբերող հավաստի տեղեկատվություն ստանալու համար:

ՊՐՈՖԵՍՈՐ ԼԱՎՐԵՆՏԻ ՄԻՐՉՈՅԱՆԸ ԴԱՐՁԱՎ 70 ՏԱՐԵԿԱՆ

Մայիսի 22-ին լրացավ մեր շատ սիրելի պրոֆեսոր Լավրենտի Միրզոյանի ծննդյան 70 ամյակը: Ձեր վաստակը Կրթության և գիտության ոլորտում անգնահատելի է, Ձեր նվիրվածությունը աշխատանքին ու անհատական վերաբերմունքը յուրաքանչյուր ուսանողին անհերքելի են դարձնում Ձեր՝ լավագույն մասնագետ լինելը: Համալսարանի ողջ անձնակազմի և ուսանողների անունից շնորհավորում ենք Ձեր հորեյանը և մաղթում առողջություն, մասնագիտական հաջողություններ և նորանոր ձեռքբերումներ:



«ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՆԺԵՆԵՐՆԵՐԻ ՀԱՎԱՔ- 2020»-Ն ԱՄՓՈՓՎԵՑ

Ասում են՝ մարդկանց լավ ճանաչելու լավագույն տարբերակը միասին ճանապարհ գնալն է: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում սա լավ գիտեն, և յուրաքանչյուր տարի ամռանը, ուսանողները դառնում են ճամբարականների մի մեծ ու համերաշխ խումբ և ճանապարհ ընկնում՝ դեպի տպավորիչ, բացահայտումներով ու հաղթանակներով լեցուն ճամբար:

Այս տարի «Երիտասարդ ինժեներների հավաք-2020»-ը Ստեփանավանում էր՝ օգոստոսի 27-31-ը: Եվ ի՞նչ ճամբար՝ առանց խարույկի: Պահպանելով հակահամաճարակային կանոնները մեր ուսանողները ծանոթացան, կիսվեցին միմյանց հետաքրքրություններով, քննարկեցին առաջիկա օրերի անելիքները:

«Երվանդունիներ», «Հայկազունիներ», «Արշակունիներ», «Արտաշեսյաններ», «Մամիկոնյաններ», «Բագրատունիներ» անունները կրող ջոկատներն հայոց արքաների վստահությամբ և հաղթելու հստակ որոշմամբ մրցեցին ճատրակի և վոլեյբոլի առաջնություններում, իրենց ուժերը փորձեցին հրաձգության և տարբեր ազգային խաղերում: Լավագույններն ուրվագծվում էին, միավորներն՝ ավելանում, սակայն հաղթողի տիտղոսին արժանանալու համար դեռ նոր փորձություններ էին սպասվում:

Առջևում «Արքայատոհմեր» թեմատիկայով նկարչության մրցույթն էր և ինտելեկտուալ խաղերը, որոնցում, ջոկատներից յուրաքանչյուրը, փայլուն արդյունքներ գրանցելով, մոտենում էր եզրագծին: Բայց, ավարտի մասին՝ վերջում:



Ինչպես կիսվում են ճամբարականները, օրերը հազեցած էին ոչ միայն խաղերով ու մրցակցությամբ, այլ նաև՝ ճանաչողական գրույցներով: Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Ուսանողական խորհրդի կողմից հյուրընկալված ապագա բժիշկների կողմից ուսանողների համար կազմակերպվել էր դասախոսություն՝ «Առաջին

բուժօգնություն» թեմայով:

Ահա և վերջ. միավորներն ամփոփելու և հաղթողներին որոշելու օրն էր: Արդյունքում գլխավոր տիտղոսակիր ճանաչվեց «Արտաշեսյաններ» ջոկատը, 2-րդը՝ «Մամիկոնյաններ»-ը և 3-րդը՝ «Բարգրատունիներ»-ը: Բայց վերադառնալ քաղաք առանց որևէ նոր և անմոռանալի տպավորության, անհնարին էր: Ուսանողները ճամբարային օրերն ամփոփեցին արշավով և սարի գլխին՝ Լոռվա կազդուրիչ ու սառն օդով համեմված նախաճաշով:

ՄԵՐ ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵՑԻՆ ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԿՈՂՄԻՑ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանն ընդունել և պետական բարձրագույն պարգևների Է արժանացրել շինարարության ոլորտի մի խումբ գիտնականների և պատասխանատուների, ովքեր իրենց անգնահատելի ավանդն են ունեցել Արցախի Հանրապետության ջրային համակարգերի արդիականացման, դրանց տեխնիկական վիճակի գնահատման, ջրային պաշարների արդյունավետ օգտագործման ոլորտում, մասնավորապես Ստեփանակերտ քաղաքի մշտական և հուսալի ջրամատակարարման համակարգի նախագծի մշակման ու դրա իրականացման գործում:

Հանդիպմանը, հրավիրյալների թվում, բացի պաշտոնատար անձանցից, ներկա են եղել նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Հիդրավիկայի ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Մարգարյանը և Հիդրավիկայի ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Արեստակ Սարուխանյանը:

ԱՀ Նախագահի հրամանագրով՝ Ստեփանակերտ և Մարտունի քաղաքների ջրամատակարարման համակարգերի վերակառուցման արդյունավետ և հուսալի լուծումներ առաջադրելու, ԱՀ-ում առկա ջրամբարների և ջրային համակարգերի տեխնիկական վիճակի հետազոտման և դրանց անվտանգ շահագործման կանոնակարգերի մշակման համար՝ պրոֆեսոր Ալբերտ Մարգարյանը պարգևատրվել է 'Անանիա Շիրակացի' մեդալով, իսկ պրոֆեսոր Արեստակ Սարուխանյանը՝ 'Մեսրոպ Մաշտոց' շքանշանով:



Մեզ հետ զրույցում, հետադարձ հայացք գցելով անցած տարիների կարևորագույն իրադարձություններին և կատարված աշխատանքներին, պրոֆեսոր Սարուխանյանը հիշում է՝ երբ 2008թ-ին Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի վերակառուցման խնդիր դրվեց, Լեռնային Ղարաբաղի կառավարությունը դիմեց Ներկայիս Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին՝ այդ կարևոր, կենսական խնդրին ինժեներական լուծումներ առաջարկելու գործում աջակից լինելու համար:

Վյցելություններ կատարեցինք, ուսումնասիրեցինք տեղանքը և համաձայնեցինք Նախագծային աշխատանքներն իրականացնել համալսարանի ուժերով, ինչը, սակայն, չափազանց բարդ էր և համալսարանը դեռևս նման ծավալի աշխատանքների հնարավորություններ չուներ՝, – նշում է Ա. Սարուխանյանը՝ անմիջապես հավելելով, որ, գիտակցելով հարցի կարևորությունն ու հրատապությունը, կարողացան հավաքագրել համալսարանի մասնագետներին և ուսանողներին, ներդնելով բոլոր ջանքերն ու հոգևոր կարողությունները, կարողացան իրականացնել կենսական այդ կարևոր խնդրի լուծումը:

Պրոֆեսոր Մարգարյանը համեստորեն նշում է. ‘Թող ինքնագովասանք չհնչի, բայց Ստեփանակերտը շուրջօրյա ջրամատակարարմամբ ապահովելը հանդիսանում է մեր համալսարանի պատմության փառահեղ էջերից: Կարծիք կար տարածված, որ այդ խնդրին անուծելի է քաղաքի ջրամատակարարման Նախկին համակարգի ունեցած մակերևութային և ստորերկրյա ջրերի հաշվին: Այլ կազմակերպության կողմից առաջարկություն կար՝ մակերևութային ջրերը կուտակող ջրամբարի կառուցմամբ իրականացնել քաղաքի ջրամատակարարումը: Մեր մասնագետների կողմից կատարված հաշվարկներով հաստատվեց, որ քաղաքի ջրամատակարարման գոյություն ունեցող համակարգի հիմնովին վերակառուցման միջոցով հնարավոր է իրականացնել քաղաքի շուրջօրյա ջրամատակարարում՝ նկատի ունենալով Նաև քաղաքի բնակչության հետագա աճը: Որոշվեց ջրամատակարարման Նախկին համակարգի մեխանիկական մղման տարրերը փոխարինել ինքնահոս սնման ռեժիմով՝:

Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի վերակառուցման աշխատանքը վստահված էր մեր համալսարանի մասնագետներին: Այստեղ Ա. Սարուխանյանն առանձնահատուկ կերպով է ընդգծում պրոֆեսոր Ռազմիկ Փետևոյանի մասնակցությունը, ում մասնագիտական գիտելիքներն ու կարողություններն անգնահատելի դեր են ունեցել Նախագծի գրագետ և արդյունավետ մշակման գործում: Շուրջ 18 ամիս տևած տքնաջան աշխատանքի արդյունքում Ներկայացվեց գրեթե 84 Նախագծային փաթեթ: Շինարարական աշխատանքները սկսվեցին, որոնց մեր մասնագետները Նույնպես աջակցում էին, և 2011թ-ին, փուլ առ փուլ, բարեհաջող կերպով հանձնվեցին շահագործման:

Ինչպես պատմում է մեր զրուցակիցը, համագործակցությունն այսքանով չավարտվեց: Ստեփանակերտի ջրամատակարարման համակարգի վերակառուցումից հետո, մերոնց վստահվեց Նաև Մարտունի քաղաքի ջրամատակարարման աշխատանքները, որոնք Նույնպես կատարվեցին մեծ նվիրումով և ծառայում են ժողովրդին առ այսօր:

Այս ամենին հաջորդեց մյուս՝ առավել կարևոր ու պատասխանատու տարեթիվը՝ 2011թ-ը, երբ կրկին մեր համալսարանի թիմին հանձնարարվեց ուսումնասիրել և բացահայտել Արցախում գոյություն ունեցող ջրամբարների տեխնիկական վիճակը. ‘Սա խիստ կարևոր և ծավալուն աշխատանք էր, որը մենք կատարեցինք 2011-2013թթ.-ին: Փորձաքննության ենթարկեցինք Անդրկովկասում ամենաբարձր գրունտային պատվարի՝ Սարսանգի ջրամբարի տեխնիկական վիճակը, 13 հատոր հաշվետվություն և հետազոտությունն ամփոփող 1 հատոր ծավալուն սեղմագիր Ներկայացրեցինք’, – նշում է Ա. Սարուխանյանը և հավելում, որ այդ տարիներին կատարվել է շուրջ 40 ջրամբարի հետազոտություն և հանձնվել ի պահոց Արցախի վերադաս կազմակերպություններին:

ՃՀՀՀՀ ռեկտորի Ժ/պ Եղիազար Վարդանյանը համալսարանի ողջ անձնակազմի անունից ռեկտորատի նիստում շնորհավորեց տ.գ.դ., պրոֆեսոր Ալբերտ Մարգարյանին և տ.գ.դ., պրոֆեսոր

Արեստակ Սարուխանյանին և հիշատակեց այն բոլոր նվիրյալներին, ովքեր իրականացրեցին արդյունավետ աշխատանք և վստահեցրեց, որ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը շարունակելու է իր ներդրումն ունենալ Արցախի և Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կարևորագույն ոլորտային ծրագրերում:

ԾՇՀԱՀ ՀՈԳԱՔԱՐԾՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՎԵՐԸՆՏՐՎԵՑ ՎԼԱԴ ԱՍԱՏՐՅԱՆԸ

«Կամուրջին» ընկերության նախագահ Վլադ Ասատրյանը սեպտեմբերի 17-ին միաձայն վերընտրվեց ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ԾՇՀԱՀ) Հոգաբարձուների խորհրդի նախագահ:




Հիմք ընդունելով 2020-ի օգոստոսի 7-ի «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը հաստատելու մասին» կառավարության որոշումը՝ սեպտեմբերի 17-ին համալսարանում տեղի ունեցավ հոգաբարձուների խորհրդի 2020-2021 ուսումնական տարվա անդրանիկ նիստը: ԾՇՀԱՀ-ի ուսանողական խորհրդի առաջարկով՝ Հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրվեց համալսարանի քաղաքային տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Խաչիկ Խաչատրյանը:

ԾՇՀԱՀ-ի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Եգիազար Վարդանյանը շնորհավորելով հոգաբարձուների խորհրդի նախագահին վերընտրվելու առթիվ և ողջունելով խորհրդի անդամներին՝ ներկայացրեց իրականացված աշխատանքները՝ ընդգծելով. «Արտակարգ դրության պայմաններում մենք կարողացանք պատշաճ մակարդակով իրականացնել ուսումնական գործընթացը՝ ի պատիվ մեր պրոֆեսորադասախոսական կազմին»: Անդրադառնալով համալսարանի ֆինանսական հատվածին Եգիազար Վարդանյանը տեղեկացրեց, որ ֆինանսական

վիճակը կայուն է: Միևնույն ժամանակ նա ընդգծեց, որ անցած տարվա համեմատ այս տարի ընդունելության աճ է գրանցվել:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Ե ԲՆԱԿԱՆՈՆ ԶՈՒՆՈՎ

2020 թ-ի սեպտեմբերի 27-ին հակառակորդը՝ օգտագործելով հրետանային և հարվածային այլ միջոցներ, հարձակման անցավ արցախա-ադրբեջանական հակամարտության գործերի շփման գծի ողջ երկայնքով՝ թիրախավորելով խաղաղ բնակավայրերը, ինչի հետևանքով Արցախում և ՀՀ-ում հայտարարվեց ռազմական դրություն: Այդ պայմաններում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, խստորեն պահպանելով համավարակային կանոնները, ուսումնական գործընթացն իրականացրեց սահմանված կարգով, որպեսզի պետությունը ստիպված չլինի երկու ճակատով պայքարել հակառակորդի և համավարակի դեմ:



ՄԵՐ ՈՒՍԱՆՈՐՆ ԻՐ ՄՐՑԱՆԱԿԸ ՆՎԻՐԱԲԵՐԵՑ ԶԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ

Վեներա Մարգարյանի անվան գերազանցության մրցանակն, արդեն 2-րդ տարին է, ինչ շնորհիվում է Շինարարության ֆակուլտետի հնժեներական գեոդեզիայի ամբիոնի լավագույն առաջիմությունն ցուցաբերած ուսանողին:

Այս տարի, սակայն, կրթաթոշակի հանձնման արարողությունը և բովանդակությունն առանձնահատուկ էր. միանվագ կրթաթոշակը 4-րդ կուրսի՝ 19,47 մոզ ունեցող ուսանող Վասիլյան Գրիշայինն էր, սակայն գումարի հասցեատերը՝ ՀՀ շինված ուժերը: Տիկին Մարգարյանի ազգականների նախաձեռնությամբ դեռևս անցյալ տարի կյանքի կոչվեց լավագույն ուսանողին Վեներա Մարգարյանի անվան գերազանցության մրցանակ շնորհելու գաղափարը, նրանք տեղյակ էին Գրիշայի հայրենանվեր մտադրության մասին և, այդ իսկ պատճառով, կրկնապատկել էին կրթաթոշակի չափը՝ հանուն Հայրենիքի, հանուն հայ սահմանապահի կարիքների:



Կրթաթոշակի հանձնման արարողությանը ներկաները, շնորհավորեցին կրթաթոշակի արժանացած ուսանողին և ողջունեցին նրան՝ հայրենանվեր արարքի համար:

ԿԵՐՏԵԼՈՎ ՅԱՂԹԱՆԱԿ

Պատերազմում մի բան երբեք չի զոհվում. դա ՀԱՅ մարտիկի հայրենասեր ոգին է, որն ուղեկցում է ամենադժարին պահին և պարտադրում՝ ՀԱՂԹԵԼ ենք, ՀԱՂԹԵԼՈՒ ենք, ապրել և ապրեցնելու ենք:

Հայրենիքի համար կռվում սահմանին կանգնած ու կենաց մահու կռիվ տվող քաջ տղերքի շարքերում էին նաև մեր համալսարանի՝ ժամկետային ծառայության մեջ գտնվող 471 ուսանողները, Հայրենիքի պաշտպանությունն այս պահին ամեն ինչից առավել գերադասած դասախոսներն ու մարտի մեջ գտնվող ընկերներին օգնության հասած կամավորները, ովքեր, բոլոր հերոսների հետ մի ամբողջական բռունցք դարձած, պաշտպանում էին բոլորիս գոյությունը, հայի՝ բացառիկ ուժեղ ու եզակի տեսակը, Նրա ապրելու աներկբա և պարտադիր իրավունքը:



Հենց նրանք էին այն հերոսները, ովքեր կյանքերի գնով փորձեցին մի հերոսական ու Նորագույն պատմություն կերտել:

Հպարտանում ենք մեր քաջերով, հավերժ փառք բոլոր այն հերոսներին, ովքեր զոհվեցին Հայրենիքի կյանքն ու ապագան փրկելու համար:

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆ ԱՐՑԱԽԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵՑ 15.500.000 ՀՀ ԴՐԱՄ

Պատերազմի օրերին աշխարհասփյուռ ողջ հայությունը մեկ միասնական ուժ դարձած սատարում է Արցախին՝ հակառակորդին ոչնչացնելու, հայկական սահմաններն անառիկ պահելու, հայ անկարտեղի զինվորի անվտանգությունն ու կարիքները հոգալու համար:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, արձագանքելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մենք ենք, մեր սահմանները. բոլորս Արցախի համար» դրամահավաք-արշավին, համալսարանի, դպրոցի և քոլեջի բոլոր ստորաբաժանումներում իրականացրեց բարեգործական դրամահավաք, որին իր անշահախնդիր մասնակցությունն ունեցավ յուրաքանչյուր աշխատակից և ուսանող:



Արդյունքում՝ հավաքագրված 8.000.000 ՀՀ դրամը և համալսարանի միջոցներից 7.500.000 ՀՀ դրամը, ուղղվեց Արցախին, Հայոց բանակի զինվորներին և հերոսաբար զոհված քաջորդիների ընտանիքներին:

ՃՇՀԱՅ-Ի ԿՈՉԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Հարգելի գործընկերներ, թանկագին բարեկամներ.

2020 թ. սեպտեմբերի 27-ից սահմանի շփման գծի ողջ երկայնքով ադրբեջանական կողմի հրետակոծության պատճառով թիրախավորվել են Արցախի խաղաղ բնակավայրերը, ներառյալ՝ մայրաքաղաք Ստեփանակերտը:

Սեպտեմբերի 28-ին Ադրբեջանական զինված ուժերի կողմից Գեղարքունիքի մարզի Վարդենիսի շրջանի զինվորական և քաղաքացիական ենթակառուցվածքներին հասցված հարվածի

արդյունքում տուժել է նաև քաղաքացիական բնակչություն, կան զոհեր: Հակամարտությունն օրեցօր ընդլայնվում է՝ տանելով շատ մարդկանց կյանքեր:

Ադրբեջանի կողմից սանձազերծված լայնածավալ ռազմական գործողությունները ուղղակիորեն համակարգվում են Թուրքիայի կողմից և ուղղված են Արցախի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ և տարածաշրջանում իրավիճակի ապակայունացմանը:

Ադրբեջանական կողմը, Արցախի և Հայաստանի տարածքը ռմբակոծելով միջազգային կոնվենցիաներով արգելված կասետային ռումբերով, տարբեր տրամաչափի զինատեսակներով, «SOU» հրթիռահրետանային համակարգերով, հրահրում է լայնամասշտաբ պատերազմ:

Առանձնահատուկ անհանգստություն է առաջացնում Ադրբեջանի զինված ուժերի կազմում ծառայող թուրք մասնագետների, Սիրիայից և Լիբիայից Ադրբեջանի տարածք տեղափոխված վարձկան-ահաբեկիչների խմբավորումների մասնակցությունը ռազմական գործողություններում: Այս հաստատված փաստի մասին են բարձրաձայնում աշխարհի գերտերությունները՝ Ռուսաստանը, ԱՄՆ, Ֆրանսիան, Իրանը, միջազգային հանրությունն ու լրատվամիջոցները՝ կոչ անելով անհապաղ դադարեցնել հակամարտությունը և ձեռնպահ մնալ այն բոլորքցելու քայլերից:

Ցավոք, ադրբեջանա-թուրքական ավերիչ պատերազմում զոհվածների թվում են Հայաստանի Հանրապետության բուհերի, նաև Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի դասախոսներ, ուսանողներ, ովքեր կամավոր մեկնել են ռազմաճակատ՝ կենաց-մահու կռիվ էին մղում իրենց Հայրենիքի ապագայի համար:

Հարգելի գործընկերներ, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների և անձամբ իմ անունից խնդրում ենք կոչով դիմել Ձեր և աշխարհի երկրների ղեկավարներին, միջազգային իրավասու կազմակերպություններին՝ խստագույնս դատապարտել Ադրբեջանի և Թուրքիայի կողմից՝ Սիրիայի և Լիբիայի ահաբեկիչ-վարձկանների մասնակցությամբ հրահրած կործանարար ռազմական գործողությունները, որոնք ոճրագործություն են թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի, և թե՛ առաջադեմ մարդկության և քաղաքակրթության հանդեպ:

Լիահույս ենք, որ Ձեր գործունե աջակցությունը մեծապես կնպաստի դադարեցնելու արյունահեղությունը և խաղաղ ճանապարհով լուծելու տարածաշրջանային խնդիրները:

ԾՀՀԱՀ ռեկտորի ժ/պ, տ.գ.դ., պրոֆեսոր Եղիազար Վարդանյան

ԱՐՑԱԽՑԻ ՓՈԶՐԻԿՆԵՐԻՆ ՍԵՐ ՈՒ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԷԻՆՔ ՆՎԵՐ ՏԱՐԵԼ

Երեխաներն ամենից շատ խաղաղության գույնն են սիրում. մի փոքրիկի համար դա սպիտակն է, մյուսի համար՝ կարմիրը, կանաչը, դեղինը... Արցախցի փոքրիկները, օրվա հրամայականով, երազում են եռագույն խաղաղություն, վերադարձ ջերմ ու ընտանիքի սիրելի անդամներով շրջապատված տուն, վերադարձ դեպի սիրելի խաղերը՝ կապույտ և անաղմուկ երկնքի տակ, վերադարձ այնտեղ, որտեղ բոլորը ներկա են...

Արզնիի թիվ 1 առողջարանում այդպիսի փոքրիկներ էին ապրում ու թեև կարոտած, թախծոտ աչքերով, բայց պապից, հորից ժառանգած և միայն հային հատուկ ապրելու ուժեղ կամքով և դրանից ծնված ժպիտով: Հանգստյան օրերին նրանք հյուրեր ունեին՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Ուսանողական խորհուրդը, որի յուրաքանչյուր անդամ իր բաժին սերը, ջերմությունն ու նվերն էր տարել փոքրիկներին: Նպատակը մեկն էր՝ փաստել, որ նրանք էլի տանն են իրենց Հայրենիքում՝ շրջապատված իրենց սիրող ու հոգատար մարդկանցով: Ու թեև լուսանկարներով հնարավոր չէ փոխանցել նրանց ողջ

ուրախությունն ու ոգևորությունը, բայց ակնհայտ է, որ գույներով ու խաղերով լցված նրանց օրն իսկապես ստացվել է այնպես, ինչպես Արցախի հանրապետության այն դրոշը, որը նրանք նկարել և միավորել են մեկ խճանկարում՝ խորհրդանշելով աշխարհասփյուռ հայության միասնականությունն ու հաղթելու ուժը: Այցելությունը միակ անգամը չէր:



Մեր ուսանողները փոքրիկներին ևս մեկ հաճելի ու տաքուկ անակնկալ էին պատրաստել՝ զբոսանք Երևանում և այլ զվարճանքներ: Հիմա յուրաքանչյուրիս կողքին են ապրում այսպիսի խրոխտ և պատերազմի ավարտին մեծ հույսով սպասող հայ փոքրիկներ, ովքեր ավելի ուժեղ են, նրանց ծիծաղի ձայնը ցանկացած զենքի արձակած ձայնից ավելի զիլ է, իսկ հայացքի մեջ գրված է մաքրամաքուր հայերենով՝ հաղթելու ենք:

ՄԱՀԱՑԱՎ ՊՐՈՖԵՍՈՐ ԳՈՒՐԳԵՆ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

Ցավով տեղեկացանք, որ կյանքից հեռացել է ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ճարտարապետական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Մուշեղյանը: Բազմաթիվ խոշոր ու կարևոր ճարտարապետական նախագծերի հեղինակն իր ուրույն ձեռագիրն է թողել նաև

մեր համալսարանում կրթելով ճարտարապետների մի քանի սերունդ:



Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ողջ անձնակազմը իր խորին ցավակցությունն է հայտնում պրոֆեսոր Մուշեղյանի ընտանիքի անդամներին, հարազատներին և ընկերներին:

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՎ ՈԱԶՄԻԿ ՓԵՏԵԿՈՏՅԱՆԸ

Վախճանվեց Ռազմիկ Արտավազդի Փետևոյանը, Հայաստանի Հանրապետության տեխնիկական ոլորտի նշանավոր գիտնականը և վաստակաշատ մանկավարժը: Շնորհիվ հետազոտողի յուրահատուկ բնավորության՝ նա աչքի ընկավ իր կատարած աշխատանքների խիստ ընդգծված կիրառական նշանակության շնորհիվ, որոնք միտված էին բարելավելու Հանրապետության բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի տեխնիկական վիճակը և դրանք համապատասխանեցնելու միջազգային չափանիշներին:

Ռ. Փետևոյանը առավելապես նշանավոր էր կրթության ոլորտում: ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում պաշտոնավարելով որպես ամբիոնի վարիչ՝ այնուհետև երկար տարիներ Հիդրոշինարարական ֆակուլտետի դեկան շուրջ 50 տարի նա բյուրեղյա մաքրությամբ ծառայեց սերունդների դաստիարակման սուրբ գործին: 1980-85թթ-ին աշխատեց Ալժիրի Հանրապետության Անաբայի համալսարանում, դասավանդելով Հիդրավլիկա, Ջրամատակարարում և ջրահեռացում առարկաներ: Վերջին տարիներին վաստակաշատ պրոֆեսորի համբավով ծառայեց ուսանողներին և ԻՐ շատ սիրելի համալսարանին:



Մեծ Է Ռ. Փետևոյանի թողած գիտամանկավարժական գործունեության ժառանգությունը: Նա հեղինակ է շուրջ 10 դասագրքերի, գիտա-մեթոդական գրքերի և 81 գիտական հրապարակումների: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 6 թեկնածուական ատենախոսություններ: Մասնագիտական խորը գիտելիքները նա օգտագործում էր ի նպաստ մեր երկրի ջրային համակարգերի արդիականացման գործին: Նրա հմուտ խորհրդատվական ծառայությունների շնորհիվ էր, որ արտասահմանյան կազմակերպություններին հաջողվեց երևանում և Հանրապետության մյուս խոշոր քաղաքներում ունենալ շուրջօրյա ջրամատակարարում:

Հմուտ մանկավարժ էր, խմելու ջրերի մաքրման եզակի մասնագետ: Հանրապետությունում չկար ջրի մաքրման մի կառույց, որի վերակառուցմանը մասնակից չլիներ, պահանջկոտ էր, ըմբոստ, չհանդուրժող և հոգատար: Ռ.Ա. Փետևոյանի պայծառ հիշատակը ընդմիշտ վառ կմնա Նրա մտերիմների, ընկերների, աշակերտների, ՃՀԱՀ ողջ կոլեկտիվի, ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ստվար մասնագետների սրտերում:

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՎ ԾՇՀԱՀ ՊՐՈՓԵՏՈՐ ԱՐԿԱՂԻ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ

Հայաստանի տեխնիկական գիտությունը ծանր կորուստ ունեցավ: Կյանքից հեռացավ ճանաչված գիտնական, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ուսումնական գործընթացի բազմափորձ կազմակերպիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արկաղի Միսակի Բարխուդարյանը: Նա իր ողջ գիտակցական կյանքը կապել էր հարազատ կրթօջախին՝ մեծ ներդրում ունենալով նրա զարգացմանը, ուսումնամեթոդական աշխատանքների, ուսումնական առաջավոր փորձի պրոպագանդման, ներդրման գործընթացներում: Եվ պատահական չէ, որ ՃՀԱՀ-ն այսօր դարձել է ոչ միայն մեր հանրապետության, այլև նմանատիպ բուհերի առաջատարներից:

Պրոֆեսոր Արկաղի Բարխուդարյանը Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարության ֆակուլտետում ստացել ինժեներ-շինարարի պետական որակավորում: Նա ուսումնական երկու ձեռնարկների, 100-ից ավել աշխատությունների, 17 հեղինակային վկայագրերի հեղինակ է:



Աշխատանքային գործունեությունը սկսել է ԵրՊԻ նյութերի դիմադրության ամբիոնում, որպես

ասպիրանտ, իսկ 1984-ին նշանակվել է հիդրավիկայի ամբիոնի վարիչ: Երբ կազմավորվում է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը ճանաչված գիտնականը տեղափոխվում է ՃՇՀԱՀ՝ նշանակվելով հիդրավիկայի ամբիոնի վարիչ, իսկ 1990-ին՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր:

Հարգարժան պրոֆեսորն 1985-ին արժանացել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակի, իսկ 2012-ին՝ ՀՀ գիտության վաստակավոր գործիչի պատվավոր կոչմանը:

«ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» ՀԱՄԱԺՈՂՈՎԸ՝ ՀԵՌԱՎԱՐ ՁԵՎԱԶԱՓՈՎ

Հեռավար եղանակով կայացավ 2020 թ-ի «ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիումի անդամ բուհերի նախագահական համաժողովը, որա շրջանակում կայացած ճարտարապետական ուսանողական մրցույթի արդյունքների ամփոփումը:

ՃՇՀԱՀ և Պեկինի շինարարության և ճարտարապետության համալսարանի միջև ձևավորված սերտ համագործակցության շնորհիվ՝ մեր համալսարանը 2017 թ. սկսած ակտիվ մասնակցություն է ցուցաբերում «ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» նախաձեռնությանը, որի կազմակերպումն ու ֆինանսավորումը իրականացվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից:



«ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիումի անդամ բուհերի նախագահական համաժողովը ղեկավարում էր Պեկինի շինարարության և ճարտարապետության համալսարանի նախագահ՝ պրոֆեսոր Ժանգ Այլինը: Միջոցառմանը հրավիրված էին մասնակցելու Պեկինի քաղաքային իշխանությունների անդամներ, Չինաստանի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի, Լեհաստանի, Բոսնիա և Հերցեգովինայի առաջատար բուհերի ղեկավարներ, ոլորտային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Համաժողովին մասնակցեցին ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորի Ժ/պ, պրոֆեսոր Եղիազար Վարդանյանը, համալսարանի գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր՝ Մանուկ Բարսեղյանը, ճարտարապետության ֆակուլտետի ղեկան՝ Գառնիկ Ստեփանյանը և Լեզունների կենտրոնի ղեկավար՝ Սիրանուշ

Հովհաննիսյանը:

Իր ելույթի խոսքում պարոն Վարդանյանը ողջունեց բոլոր ներկաներին և շնորհակալություն հայտնելով միջոցառման կազմակերպիչներին հրավերի համար՝ ՃՀԱՀ ողջ անձնակազմի և ուսանողության անունից երախտագիտության խոսքեր փոխանցեց Պեկինի շինարարության և ճարտարապետության համալսարանի ողջ անձնակազմին և նախագահ, պրոֆեսոր Ժանգ Այինին՝ մեր համալսարանին և ողջ հայ ժողովրդին հայ-ադրբեջանական հակամարտության կապակցությամբ զորակցություն հայտնելու համար:

Պարոն Վարդանյանը մեծապես կարևորեց շարունակական և փոխշահավետ համագործակցությունը «ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիումի անդամ բուհերի միջև՝ առանձնակի ուշադրություն դարձնելով «ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» նախաձեռնության շրջանակում ճարտարապետական համայնքի ձևավորմանը:

Համագործակցությունն առավել առարկայական և արդյունավետ դարձնելու նպատակով՝ ռեկտորի Ժ/պ Վարդանյանի կողմից առաջարկվեց խրախուսել միջազգային մրցույթ-ստուգատեսների համատեղ կազմակերպումն ու անցկացումը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողների միջազգային գիտակրթական ծրագրերի շրջանակում փոխանակումները: Հաշվի առնելով սեյսմակայուն շինարարության ոլորտում Հինաստանի հարուստ փորձը՝ առաջարկվեց կազմակերպել հայ մասնագետների մասնակցությամբ համատեղ գիտափորձարարական հետազոտություններ: Կարևորվեց ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար գործընկեր բուհերում առկա էլեկտրոնային գրադարաններին հասանելիություն ապահովող մեխանիզմների ներդրումը: Անդրադարձ կատարվեց ժամանակակից շինարարական նյութերի ստացման, հետազոտման և կիրառման ոլորտում համագործակցության հաստատմանն ու «կանաչ քաղաքների» նախագծմանը:

Այնուհետև կայացավ «ԳՈՏԻ ԵՎ ՈՒՂԻ» ճարտարապետական համալսարանների միջազգային կոնսորցիումի անդամ բուհերի նախագահական համաժողովի շրջանակում անցկացված ճարտարապետական ուսանողական մրցույթի արդյունքների ամփոփումը: «Ճարտարապետական նախագծում» անվանակարգում ՃՀԱՀ ճարտարապետության ֆակուլտետի ուսանողներ Վահրամ Աղաջանյանի և Լեռնիկ Գալստյանի՝ «Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան Մայրավանքի գրադարանի ռեվալորիզացիայի հայեցակարգ» նախագիծն արժանացավ պատվոգրի (ղեկավարներ՝ պրոֆեսոր Արտյոմ Ալոյան, դոցենտ Հովհաննես Սանամյան): Նույն մրցույթի «Կոնստրուկտիվ նախագծում» անվանակարգում ՃՀԱՀ Նույն ֆակուլտետի ուսանող Մարիետտա Գևորգյանի՝ «Ձերմուկ քաղաքի հյուրանոցի, կամուրջի և բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցում» նախագիծը արժանացավ մրցանակային երրորդ տեղի և դրամական պարգևի (ղեկավար՝ պրոֆեսոր Հայկ Ասատրյան):

ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՎՈՒՄ ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ՀԱՂԹԵԼ

«Ճիշտ է՝ թշնամին նույնն է, բայց պատերազմները տարբեր են: Հիմա ինտելեկտուալ և իմպրովիզացիոն պատերազմ է...»: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Գեոէկոլոգիայի և կենսաանվտանգության ամբիոնի վարիչ, Հայաստանի անձավագիտական կենտրոնի նախագահ Սամվել Շահինյանը մեր համալսարանից պատերազմ մեկնած կամավորներից մեկն էր: «Տարիքս կապ չունի, ո՞ւմ է պետք անազատ ու անկախությունից զուրկ կյանքը»: այս համոզմունքով է կրկին ռազմի դաշտում իր բաժին պայքարը մղում պարոն Շահինյանը: Մեզ հետ զրույցում որքան էլ հոգնած, բայց մարտական տրամադրվածությամբ ու ոգևորությամբ մեր հաղթանակի մասին խոսելիս նկատեց, որ մեր օրերի պատերազմն Էսպես տարբերվում է Է 88թ-ի շարժումից նորարար զինտեխնիկայի ու հնարավորությունների առումով, բայց նույնն է հաղթելու հաստատականությամբ ու մեր երիտասարդների կամքի աներևակայելի մեծ զգացումով. «Այսօր մեր երիտասարդները հրաշքներ են գործում: Նրանք ավելի ընկալունակ են,

ավելի հեշտ են տիրապետում նորագույն տեխնիկային, ինչն այս պատերազմի կարևորագույն բաղադրիչներից է», – նշում է կամավոր Շահինյանը՝ հավելելով, որ հաղթելու մյուս կարևոր պայմանը ողջ մնալն է, ինչը հնարավոր է միայն արագ ինքնակազմակերպվելու, կողմնորոշվելու, անձնական պաշտպանությունը ճիշտ կազմակերպելու, գործիքներից ու տեղանքից քաջատեղյակ լինելու արդյունքում: «Չինվորը պետք է օգտագործի չափավոր զենք, բայց առավելագույն խոցելիությամբ, պետք է մի կողմ դնի բոլոր զգացմունքները՝ կլինի դա սեր, վախ, սարսափ, խուճապ, և առաջնորդվի միմիայն ողջ մնալու բնագործով: Միայն այս դեպքում է հնարավոր հաղթել»:



«Հաղթելուն մի հանգամանք էլ է օգնում. գինվորագրված կանայք», – անկեղծանում է պարոն Շահինյանը: Նրա խոսքերով՝ կանանց ներկայությամբ գինվորներն առավել զգոն ու պատասխանատու են, հետևում են նույնիսկ իրենց խոսելաձևին, ինչն էականորեն դրական ազդեցություն է թողնում նաև կռվի որակի վրա: Սա մեր վերջին կռիվը պետք է լինի... Միանշանակ՝ վստահ է գրուցակիցս, թշնամին վերջանականապես պետք է հասկանա, որ հայի գոյությունը, նրա մշակույթն ու 7200 տարի կենդանի մնացած լեզուն չի կարող պարտվել: «Մենք պարտավոր ենք հաղթել, ավելի ճիշտ՝ մենք արդեն հաղթել ենք», – ասում է Շահինյանը՝ հիշելով Սարտիրոս Սարյանի խոսքերը: «Երբ Սարյանին հարցնում են՝ հայերն ինչ-որ յուրահատուկ, աստվածային ժողովուրդ են, Սարյանը պատասխանում է՝ ոչ: Իսկ ի՞նչ կփոխվի մյուս ժողովուրդների կյանքում, եթե հայերը չլինեն: Սարյանը պատասխանում է՝ ոչ մի բան չի փոխվի, բայց ո՞ւմ է պետք կյանքն՝ առանց հայերի»: Սամվել Շահինյանը գիտի, հայերին էլ պետք չէ կյանք՝ առանց ազատ, անկախ ու հզոր Հայրենիքի, հետևաբար երեկ էլ, այսօր էլ՝ հաղթել ենք ու հաղթում ենք:

ԵՐԻԱՉԱՐ ՎԱՐՂԱՆՅԱՆԸ ԸՆՏՐՎԵՑ ՃՇՅԱՅ ՌԵԿՏՈՐ

2020թ-ի նոյեմբերի 16-ին՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՀԱՅ) հոգաբարձուների խորհրդի նիստում, մինչ օրակարգին անցնելը՝ մեկ րոպե լռությամբ հարգեցին Արցախի պատերազմում իրենց կյանքը հանուն հայրենիքի զոհաբերած, այս պահին համալսարանի 20 ուսանողի, ինչպես նաև մյուս նահատակների հիշատակը:

ՃՀԱՅ-ի հոգաբարձուների խորհրդի նիստում քննարկվեց համալսարանի ռեկտորի ընտրության հարցը: Հիմք ընդունելով ռեկտորի ընտրությունների վերաբերյալ ընթացակարգի պայմանները՝ համալսարանի ռեկտորի ընտրության օրը սահմանվել էր նոյեմբերի 16-ը տեղեկացրեց հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Վլադ Ասատրյանը: Նիստում փակ, գաղտնի քվեարկությամբ միաձայն Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտոր ընտրվեց տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր,

համալսարանի ռեկտորի ժ.պ. Եղիազար Վարդանյանը:



Համալսարանի ռեկտորի պաշտոնի համար մրցույթի մասին հայտարարությունը սահմանված կարգով և սահմանված ժամկետներում տեղադրված է եղել համալսարանի կայք էջում և լրատվական միջոցներում:

ԱՄՈՒՐ ԹԻԿՈՒՆՔ՝ ՀԶՈՐ ԲԱՆԱԿ

Սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի առաջին օրվանից ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը բացի ֆինանսական աջակցությունից, իրականացրել է տարատեսակ ծրագրեր, որոնք էլ ավելի են ամրացրել մեր բանակի թիկունքը: Մենք վստահ ենք՝ այս գործընթացը պետք է լինի շարունակական, քանզի բանակի թիկունքն ամրացնելը բոլորիս սրբազան պարտքն է:

ԱՄՈՒՐ ԹԻԿՈՒՆՔ՝ ՀԶՈՐ ԲԱՆԱԿ



Այդ իսկ համոզմունքով՝ ՃՇՀԱՀ-ի, ավագ դպրոցի և քոլեջի աշխատակազմը, դասախոսները, ուսուցիչները, ուսանողները շարունակում են իրենց ֆինանսական օգնությունը ցուցաբերել մեր բանակին: Այսպիսով՝ հավաքագրված գումարը և համալսարանի միջոցներից նախատեսված գումարը՝ ընդհանուր 6.000.000 ՀՀ դրամ, ուղղվեց հավասարապես «Չինժառայողների ապահովագրության» հիմնադրամին և «Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոն»-ին՝ Հայրենիքի սահմանները պաշտպանելիս զոհված կամ հաշմանդամություն ստացած զինժառայողներին, նրանց ընտանիքներին ապահովագրելու և հատուցումներ տրամադրելու նպատակով:

Ամուր թիկունք՝ հզոր բանակ. այս կարգախոսն է առաջնորդել և առաջնորդելու ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանին:

Ընդհանուր առմամբ՝ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը փոխանցել է 21,500,000 ՀՀ դրամ:

«ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԵՌԱՎԱՐ ԵՂԱՆԱԿՈՎ

Այս տարի «Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» խորագրով XII միջազգային գիտաժողովն անցկացվեց Սանկտ-Պետերբուրգի պետական ճարտարապետա-շինարարական համալսարանում՝ նոյեմբերի 25-26-ը: COVID-19 համավարակով պայմանավորված՝ այն կանցկացվի հեռավար եղանակով:

Գիտաժողովի նպատակը հետազոտությունների արդյունքների փոխանակումն է, դրանց կիրառումը ճարտարապետության և շինարարության ոլորտում և միջազգային գիտական համագործակցության ձևավորումն ու ամրապնդումը տարբեր երկրների համալսարանների միջև:

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ուսանողների, գիտաշխատողների և դասախոսների կողմից ներկայացվել է 18 գիտական հոդված:



Նշենք, որ գիտաժողովի կազմակերպիչներն են՝ ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Սանկտ-Պետերբուրգի ճարտարապետա-շինարարական պետական համալսարան, Ֆլորենցիայի համալսարան, Մոսկվայի Շինարարական պետական համալսարան, Պեկինի քաղաքացիական շինարարության և ճարտարապետության համալսարան,

Օստրավայի տեխնիկական համալսարանը, Ամերիկյան Ռատգերսի համալսարանը, Բաթումիի Շոթա Ռուսթավելու պետական համալսարանը, Վրաստանի ավիացիոն համալսարանը, Լեհաստանի Չեստոխովայի տեխնոլոգիական համալսարանը:

ԿՅԱՆՔԻՑ ՀԵՌԱՑԱՎ ԲԱՑԱՌԻԿ ՄԱՐԴ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏ ԱՐՏԱՎԱԶԴ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԸ

Գործընկերները խորը վշտով են արձանագրում նրա մահը. ասում են՝ պարոն Արզումանյանը ոչ միայն եզակի մասնագետ էր, այլ նաև՝ անփոխարինելի մարդ ու ընկեր:

Այսօր կյանքի 68-րդ տարում մահացել է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի Շինարարական նյութերի, պատրաստվածքների և կոնստրուկցիաների արտադրության ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու Արտավազդ Արզումանյանը: Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետա-շինարարական ֆակուլտետում յուրացնելով «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» մասնագիտությունը, որպես ասպիրանտ, նա ուսումը շարունակել է Մոսկվայի Պետշինի «Բետոնի և երկաթբետոնի գիտահետազոտական ինստիտուտում»: Երկար տարիներ իր մասնագիտական գիտելիքներով ու կարողություններով անգնահատելի ներդրում է ունեցել նախկին «ճարտարապետության և շինարարության Հայկական գիտահետազոտական ինստիտուտում» (ՀՀ Քաղաքաշինության նախարարության «Սեյսմակայուն շինարարության և կառուցվածքների պահպանման Հայկական գիտահետազոտական ինստիտուտ»)՝ որպես գիտական աշխատող, գիտահետազոտական սեկտորի վարիչ, գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, ապա՝ ինստիտուտի գիտական տնօրեն:



Լինելով շինարար-ինժեներ՝ Արտավազդ Արզումանյանը ընդգծված հետաքրքրությամբ և գիտնականին հատուկ խորաթափանցությամբ ուսումնասիրում էր նյութը: «Երբ կոնստրուկցիայի մեջ խորացա, հասկացա, որ նյութից պետք է սկսել», - իր ավագ գործընկերոջը հիշում է համալսարանի Շինարարության ֆակուլտետի դեկան Դավիթ Գրիգորյանը: Նա ցավով է փաստում, որ Արզումանյանի՝ որպես մասնագետ տեղը դեռ երկար բաց է մնալու, քանզի նա անփոխարինելի էր շենքերի տեխնիկական վիճակի հետազննման, փորձաքննության, ուժեղացման, ուսումնասիրման, վերակառուցման ոլորտներում. «Պիտի ֆիքսենք, որ, այո, պարոն Արզումանյանի մակարդակի մասնագետ այս ոլորտում մենք չունենք»:

Արտավազդ Արզումանյանը եզակի էր ոչ միայն որպես մասնագետ, այլ նաև օժտված էր մարդկային ամենաբարձր և ազնիվ որակներով: Դոցենտ Մարիա Բադալյանը պատմում է, պարոն

Արգումանյանը հոգատար և ուշադիր էր յուրաքանչյուր աշխատակցի նկատմամբ, գիտեր նրանց տարեդարձերը, բոլորին վարակում էր իր հանգստությամբ և աշխատանքի նկատմամբ իր մեծ սիրով:

«Հանգի՛ստ. դա պարոն Արգումանյանի համար չէր: Նա աշխատում էր օրը 14-16 ժամ, նույնիսկ, երբ վատառողջ էր», - նշում է տիկին Բադայանը և հիշում մի դեպք, երբ բժշկի գնալու միտքն անդադար վանելուց հետո, ինքն անձամբ է բժշկին կանչել ամբիոն, որպեսզի հետազոտի Արգումանյանին:

Արտավազը Արգումանյանն իր աշխատանքային գործունեության ընթացքում վերակառուցման և ուժեղացման բազմաթիվ նախագծեր է իրականացրել բնակելի, հասարակական նոր շենքերի, արտադրական, տրանսպորտային ու հոգևոր գործառնական նշանակության, սեյսմիկ և այլ բնական ու տեխնածին ազդեցություններից վնասված կառույցների համար, ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Ռուսաստանում, Հնդկաստանում, Իրանում, Վրաստանում: Ղեկավարի կարգավիճակով մասնակից եղել շինարարական կոնստրուկցիաների, շինարարական նյութերի ու տեխնոլոգիաների բնագավառում մի շարք գիտահետազոտական աշխատանքների կատարմանը, նաև՝ հանրապետական նորմատիվահրահանգչական փաստաթղթերի մշակմանը:

Այսպիսին էր Նա՝ իր գործի գիտակ, բացառիկ մարդ ու մասնագետ Արտավազը Արգումանյանը: Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ողջ անձնակազմն իր ցավակցություններն է հայտնում պարոն Արգումանյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, մտերիմներին և ընկերներին:

Հրաժեշտի արարողությունը տեղի կունենա նոյեմբերի 26-ին ժամը 18:00-ին Զանաքեռ թաղամասի Սուրբ Հակոբ եկեղեցում:

ՃՇՀԱՀ-Ն՝ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅՏԱՐԱՐԱՆԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՇԱՀԱՌՈՒ

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի՝ 2020 թ-ի դեկտեմբերի 1-ի հրամանի՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը հանդիսացել է «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու» մրցույթի շահառու և ներգրավվել «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» համար նախատեսված ֆինանսական ծավալների շրջանակներում ֆինանսավորման երաշխավորված հայտերի ցանկում:



Նշենք, որ ՀՀ գիտության կոմիտեն մրցույթ էր հայտարարել 2020թ-ի օգոստոսի 14-ին՝ ՀՀ պետական բյուջեից գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման

ծրագրում ընդգրկված գիտական պետական կազմակերպությունների կամ բուհերի կողմից ենթակառուցվածքի, կյուլթատեխնիկական բազայի արդիականացման համար գիտական սարքերի/սարքավորումների ձեռք բերման նպատակով:

ՉԱՐԳԱՑՆՈՒՄ ԵՆՔ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում նորարարական և տեխնոլոգիական բարձրագույն կրթության զարգացմանն ու ընդլայմանը նպաստելու հեռանկարով՝ Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամն ու Ճարտարապետության և Հինարարության Հայաստանի ազգային համալսարանը՝ դեկտեմբերի 8-ին, կնքեցին երկկողմ համագործակցության անժամկետ հուշագիր:



Հուշագրի բովանդակությունը ենթադրում է համագործակցության լայն շրջանակ ինչպես նոր կրթական ծրագրեր ներմուծելու, այնպես էլ Սփյուռքի և միջազգային ցանցի ոլորտային մասնագետների ներգրավման, նոր գործընկերների հետ հարաբերությունների հաստատման

համատեքստում:

Ձեռնարկությունների ինկուբատոր Հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանի և ՃՀԱՀ ռեկտոր Եղիազար Վարդանյանի կողմից ստորագրված փոխգործակցության հուշագրի գործունեության թիրախային ուղղություններն են՝ «Կլիմայի փոփոխության տեխնոլոգիական արժեքներատու» ծրագրի շրջանակում «Building Information Modeling» մագիստրոսական ծրագրի ներդրում, Շինարարության և Նորարարության ոլորտում կրթական Էկոհամակարգի առաջխաղացում, ստարտափերի տեղծմանն ուղղված աշխատանքների իրականացում, աջակցող մեխանիզմների ձևավորում:

ՃՀԱՀ-ՈՒՄ ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում հայ-ռուսական բարեկամության հերթական դրսևորումը Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էր: ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության դեսպանության, Երևանում մշակույթի և գիտության ռուսաստանյան կենտրոնի և Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հետ համագործակցության շրջանակում մեր համալսարանում բացվեց ռուսաց լեզվի կենտրոնը:



Հանդիպման մեկնարկին ՀՀ-ում ՌԴ դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ա. Սինեգուբը նախ շնորհավորեց Եղիազար Վարդանյանին՝ ռեկտորի պաշտոնում ընտրվելու կապակցությամբ և ողջունեց բոլոր ներկաներին: Աշխարհում տիրող համավարակային ծանր պայմաններում դեսպանության ներկայացուցիչը կարևոր ու խորհրդանշական համարեց մեր համալսարանում ռուսաց լեզվի կենտրոնի բացման հանգամանքը՝ նշելով, որ, կրթության և գիտության ոլորտում այն կլինի հերթական կապող օղակը հայ և ռուս


Ժողովուրդների միջև: Միջոցառման օրակարգի հաջորդ, կարևորագույն կետը ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի և Սանկտ Պետերբուրգի արտադրական տեխնոլոգիաների և դիզայնի համալսարանի միջև համագործակցության պայմանագրի ստորագրումն էր: Փաստաթղթի ստորագրումը ամուր հիմք կհանդիսանա երկու համալսարանների միջև համագործակցության ամրապնդմանը, մասնավորապես՝ գիտակրթական ու հետազոտական համատեղ նախագծերի իրականացմանը, համատեղ վերապատրաստման ծրագրերի ներդրմանը, մասնագիտական գրականության, տեղեկատվության ու փաստաթղթերի փոխանակմանը, ամառային և ձմեռային ուսանողական միջազգային դպրոցների կազմակերպմանը և այլ փոխադարձ հետաքրքրություններ կայացնող նախագծերի իրականացմանը: Առանձնակի ուշադրություն կդարձվի գիտական թվայնացված գրադարանների հասանելիությունը ՃՀՀՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների համար ապահովելու ուղղությամբ:

ԲԱՆՏՐՈՒԾԱՅՏԻՍԻ ԱՆՎԱՆ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆ ԱՆՆԱ ՔԱՐԱՄՅԱՆՆ Է

Լիտվացի պատմաբան և արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անվան մրցույթն, արդեն ավանդաբար, անցկացվում է 4-րդ տարին անընդմեջ: Այս տարի միակ խոչընդոտը, թերևս, նախագծերի ներկայացման, քննարկման ու հանձնաժողովի աշխատանքի հեռավար եղանակն էր:

Նշենք, որ Բալտրուշայտիսի անվան մրցույթի մեկնարկը տրվել է դեռևս 2017թ-ին՝ ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան, ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի, «Պետրոս Ալոյան» հիմնադրամի և «Մեդիամաքս» լրատվական գործակալության համատեղ ջանքերով:





«Պատմաճարտարապետական ժառանգության պահպանում և վերականգնում» անվանակարգով մրցանակը յուրաքանչյուր տարի շնորհվում է ճարտարապետության ֆակուլտետի՝ տարվա լավագույն ավարտական աշխատանքի հեղինակին:

Այսօր մրցույթի ավարտական փուլն ու մրցանակաբաշխությունն էր, որին տեսակապով մասնակցում էին ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլուչկիենեն, ՃՀՀՀ ռեկտոր Եղիազար Վարդանյանը, <Պետրոս Ալոյան> հիմնադրամի տնօրեն Հայկ Ալոյանը, ՃՀՀՀ պրոռեկտորները, ճարտարապետության ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ՀՀ ճարտարապետների պալատի նախագահ Մկրտիչ Մինասյանը և մրցույթի ավարտական փուլ անցած ուսանողները: Փոխադարձ ողջույններից հետո, որի բովանդակության թիրախում հայկական պատմամշակութային հարուստ ժառանգության վտանգված կամ կորսված լինելու ցավոտ ու խիստ արդիական հանգամանքն էր, հիշատակվեց Յուրգիս Բալտրուշայտիսի հայանպաստ գործունեության մասին, մասնավորապես, 2015թ-ի դեկտեմբերին Մատենադարանի նիստերի դահլիճում կայացած 'Զուղան Արաքս գետի ափին և նրա հուղարկավորության հուշարձանները' Էսսեի հայերեն թարգմանության շնորհանդեսը, որը կազմակերպումը և անցկացումը կրկին ՀՀ-ում Լիտվայի դեսպանության և ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի համատեղ աշխատանքի արդյունք էր: Այսպիսով՝ մրցույթի ավարտական փուլում, Բալտրուշայտիսի անվան մրցանակի համար պայքարում էին ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներ Անի Հարությունյունը, Աննա Զարամյանը և Վահրամ Աղաջանյանը: Այս տարի մրցանակի հավակնորդների ավարտական նախագծերի թեման Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան մայրավանքի վերականգնումն էր՝ Նոր շինությունների ինտեգրման պայմաններում:

Հանձնաժողովի անդամները՝ Մկրտիչ Մինասյանի նախագահությամբ, քննարկումներից հետո որոշեցին հաղթող ուսանողին: Բալտրուշայտիսի անվան մրցանակակիրն այս տարի Աննա Զարամյանն է, իսկ հաղթողի մրցանակն, ավանդաբար, մագիստրատուրայի վերջին կուրսի 2-րդ կիսամյակի վարձավճարի լիարժեք վճարումը:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԵՐ ՀՀ ԿԳՄՍ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՐԸ

Դեկտեմբերի 22-ին աշխատանքային այցով ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում էին հյուրընկալվել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոցյանը և նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանը:

Բուհի ղեկավարության հետ իրականացվեց շրջայց համալսարանի գիտական լաբորատորիաներում՝ հյուրերին ծանոթացնելով մեր գիտական ուղղություններին և ոլորտում զարգացման հեռանկարներին: Ձեռք բերվեցինք մի շարք պայմանավորվածություններ՝ գիտության պետական կոմիտեի և համալսարանի միջև համագործակցությունն էլ ավելի խորացնելու և Նոր ծրագրեր իրականացնելու համար:

Պատերազմ, որը դարձավ մեր ուսանողների կենսագրության մի մասը

ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՄԵՐ ԿԱՄԱՎՈՐ ՈՒՍԱՆՈՂԻ ԱԶՔԵՐՈՎ

Ասում են՝ պատերազմը զգացմունքների հետ առնչություն չունեցող երևույթ է, պիտի սառնասրտորեն գործես, մտածես, առաջին հերթին, ողջ մնալու մասին:

Սեպտեմբերի 27-ին բռնկված հուժկու պատերազմը ոտքի հանեց բոլորին. Դեպի ռազմաճակատ մեկնեցին և թեկուզ սեփական կյանքի գնով Հայրենիքի կյանքի փրկության համար երդվեցին հազարավոր հայորդիներ, որոնց թվում՝ նաև մեր համալսարանի շատ ուսանողներ:

Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Սամվել Խլղաթյանն այն կամավորներից է, ով առաջնագծում է պատերազմի առաջին իսկ օրերից: Զրույցի ընթացքում լարված է՝ տպավորություն է, թե մտածում է, որը պատմի, որը թողնի:



«Պատերազմն իսկական քաոս է, որտեղ պիտի կարողանաս ողջ մնալ». ասում է՝ պատերազմին հստակ ու կարճ բնութագիր տալն անհնար է, պետք է զգաս սեփական մաշկով, տեսնես սեփական աչքերով և լսես պայթյունների ձայնը սեփական լսողությամբ:

Սակայն, որքան էլ այդ պայթյունները խլացնում են ամեն տեսակի զգացմունքների ձայնը, 24-ամյա Սամվելը խոստովանում է, որ հենց այդտեղ ես սկսում իրապես գնահատել ապրածը, յուրաքանչյուր պահը, արժևորել քեզ շրջապատող մարդկանց, գոնե մտովի, բայց շոշափելի դարձնել այն բոլոր երազանքներդ ու ապագայիդ գործողությունները, որոնց իրականացումն անընդհատ հետաձգում էիր. «Անօրեականը դառնում է անսովոր ու յուրահատուկ», - անկեղծանում է Սամվելը:

Այն, որ հաղթելու ենք, այլընտրանք չունի, սակայն Սամվելը վստահ է, որ պատերազմում ամենամեծ հաղթանակը տանում ես հենց քո անձի նկատմամբ, քո ներքին վախերի ու տագնապների նկատմամբ: Իսկ արդեն ռազմի դաշտում թշնամին տեսանելի է, հայրենասիրությունը՝ երակներում, ամուր ընկերներդ էլ՝ կողքիդ:

Իսկ մարտական թատերաբեմում ծավալված հետաքրքիր կամ հերոսական դրվագներ...

Հայացքը չի ստում, կան իհարկե, որոնց մասին Սամվելը հիմա խոսել չի ցանկանում: Բայց այն, որ առողջական վիճակի բարելավումից հետո կրկին առաջնագծում է լինելու, վստահ է:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՔԱՋ ԶԻՆՎՈՐՆԵՐԸ

Կռիվի ավելի հերոսական ու նպատակային է դառնում, երբ կռվում ես հայրենի գյուղիդ, ծննդավայրիդ համար: Մեր համալսարանի Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Կարեն Թորոսյանն այն տասնյակ ուսանողներից է, ով մեկնեց ռազմաճակատ՝ առանց վայրկյան անգամ մտածելու: Եվ ի՞նչ ունեւր մտածելու, երբ գնում էր թշնամուց պաշտպանելու իր ծննդավայրը՝ Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղը: Հրետանավոր-հետախույզ Կարենն Արցախ է մեկնել իր կուրսընկերոջ՝ Էրիկ Գևորգյանի հետ: Պատմում է՝ «մեծացել եմ պատերազմի, հաղթանակների ու հայրենասիրության մասին պատմություններով, հայրս և հորեղբայրս կռվել են թե՛ 1988թ-ի շարժմանը, թե՛ Ապրիլյան պատերազմին»: Իսկ այս պատերազմին սահմանները պահելու հերթն իրենն էր, գնացել է վստահ և հաղթելու անհագ ցանկությամբ:



«Վախերի մասին մտածելու ժամանակ չի լինում». ինչպես 4-րդ կուրսի ուսանող Սամվել Տաչյանն է ասում, նախ պետք է վախդ սպանես, հետո՝ թշնամուդ: Նրա խոսքերով՝ կռիվ մեկնող յուրաքանչյուր մարդ պիտի գիտակցի, որ պատերազմը նաև կյանքի ու մահվան կռիվ է, և միայն բարձունքում գտնվող ազգասիրությունը կարող է դրդել նրան մեկնել առաջնագիծ՝ զոհվելու վախը հաղթահարած:

Այն, որ պատերազմը սարսափելի ու դժոխային երևույթ է, անկասկած է, բայց անկասկած է նաև այն, որ մարդկանց բոլոր լավ ու վատ կողմերը բացահայտվում են հենց ռազմի դաշտում: «Մենք շատ ուժեղ և հզոր հայերենակիցներ ունենք», - ասում է Սամվելը և հավելում, որ ցավոք կան

Նաև նրանց հակառակները...

Հաղթահարված վախ, կոփված կամք, հայրենասիրություն, կազմակերպվածություն և զենքին լավ տիրապետում: Սա է հաղթելու բանաձևը՝ ըստ 3-րդ կուրսի ուսանող Սուրեն Մկրտչյանի:

Պատերազմի ելքը խորթ էր բոլորի համար՝ հաղթանակի համը ճաշակած անկախության սերունդը հավատում է, որ ամեն ինչ դեռ արջևում է...

ԴԻՉԱՅՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԵՐՕՐՅԱ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Նրանց անունները շատ են, նրանցից ոմանք նույնիսկ չեն ուզում խոսել՝ հիշողությունները ցավոտ են: Նրանք մերօրյա հերոսներն են, մարդիկ, ովքեր օրեր շարունակ կյանքի ու մահվան ճամփեզրին պայքարում էին՝ հանուն Հայրենիքի, հանուն հաղթանակի:

Մեր համալսարանի Դիզայնի ֆակուլտետի շուրջ 2 տասնյակ ուսանող առաջնագծից օրեր առաջ է վերադարձել՝ պատերազմը հաղթահարած, բաղձալի հաղթանակը՝ հոգում դեռ փայփայելով: Վերադարձել են մարմնով և հոգով վիրավոր, բայց հավատով, որ մի օր Հայրենիքը կրկին վերագտած ու միավորված են տեսնելու:



Չրույցը նրանց հետ ծանր էր՝ «պատերազմը սարսափելի է բան է, նույնիսկ ֆիլմերում այդպես չէ» նախաբանով: Բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանող Յուրա Գրիգորյանը ռազմաճակատ է մեկնել պատերազմի առաջին իսկ օրերին: Ասում է՝ բառերով պատմելու չի այն, ինչ տեսնում և զգում ես կրակի դիմաց կանգնած, խառնվում են բոլոր հույզերդ ու զգացմունքներդ, միայն փորձում ես ողջ մնալ՝ հանուն Հայրենիքիդ կյանքի և պայմանով, որ պատերազմից հետո սկսելու ես առավել գնահատել ապրածդ յուրաքանչյուր օրն ու պահը: Նույն զգացողություններով է վերադարձել նաև 4-րդ կուրսի ուսանող Հարություն Սուքիասյանը. «Բարձր ոգու և հայրենասիրության խնդիր հայ զինվորը չունի», -ասում է նա՝ Նշելով սակայն, որ սա պատերազմ չէր մարդը՝ մարդու դեմ, պատերազմ էր գազանի դեմ: Խոստովանում է՝ պատերազմը միայն կյանքդ, քեզ շրջապատող մարդկանց արժևորելու և կյանքդ ավելի գիտակցված ապրելու ցավոտ, բայց սթափեցնող

հնարավորություն է:

«Պատերազմից հետո սկսել եմ առավել սառն ու ճիշտ դատել և իրավիճակներին համարժեք պատասխան տալ», - պատերազմի թողած հետքերին վերաբերող հարցիս ի պատասխան ասում է 1-ին կուրսի ուսանող Արեգ Մխիթարյանը, - գիտես, թե ում և ինչի համար ես կռվում և հենց այդ գիտակցությունն է ստիպում ամեն վայրկյան արթուն ու ողջ մնալ:

Իսկ ահա 4-րդ կուրսից ռազմաճակատ մեկնած կամավոր Ռուբեն Մուրադյանը դեռ սահմանին է: Հրադադարից հետո վերադարձել, ապա նորից մեկնել է Արցախ. իր իսկ խոսքով՝ սահմաններն անընդհատ հսկողության կարիք ունեն: Պատերազմական օրերից և հետպատերազմյա իրադրությունից, հասկանալի պատճառով, շատ բան պատմել չկարողացավ, միայն ասաց, որ պատերազմը պիտի ավարտվեր, այլընտրանք չկար:

Սահմանին կանգնած Ռուբենի վերջին միտքը կիսեցին պատերազմի բոլոր անցած տղաներից շատերը. «Հաղթանակի համար էինք կռվում, էլի կշարունակեինք, բայց կանգ առանք, որպեսզի կռիվը ցեղասպանության չվերածվեր»:

ՃԱՆԱԶԵՆՔ ՄԵՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Ճարտարապետները գիտեն կառուցել, շենացնել, գիտեն ինչպես քարը դնել քարին, որպեսզի Հայրենիքն ավելի ամուր և անվտանգ լինի: Եվ սա ոչ միայն խաղաղ պայմաններում: Պատերազմի մասին լուրն առնելուն պես, կամավորության սկզբունքով, առաջնագիծ մեկնեցին նաև մեր համալսարանի Ճարտարապետության ֆակուլտետի ուսանողները: Նրանց անունները շատ են, շատերը ռազմի դաշտում էին հայտնվում արդեն 2-րդ անգամ՝ մասնակցել էին նաև Ապրիլյան քառօրյա պատերազմին:



«Թշնամին նույնն է, բայց պատերազմները տարբեր էին»՝ փաստում են զրուցակիցներս: Նրանց խոսքերով՝ Ապրիլյանի ժամանակ չհասկացանք, թե ինչ կատարվեց, իսկ հիմա՝ թե ինչ է անընդհատ կատարվում: Մագիստրատուրայի ավարտական կուրսի ուսանող Վահան

Հարությունյանը նշում է, որ մեր բանակը հիմա, քան երբևէ, մարտունակ է՝ թե՛ նյութատեխնիկապես, թե՛ զինվորի պատրաստվածությամբ, բայց պայքարն անհավասար էր: Ասում է՝ պատերազմն այնպիսի սթրեսային իրավիճակ է, որում գտնվող ոչ բոլոր զինվորները կարող են հաղթահարել վախերը, տագնապները, մոռանալ աչքի տեսածն ու ցավոտ հիշողությունները. «Ես ինքս պատերազմից հետո ավելի բռնկուն եմ դարձել, չգիտեմ, դեռ սթրեսային վիճակի՞ց եմ, թե՞ բնավորության գիծ է դարձել», - ասում է Վահանը:

«Պատերազմի դաշտում ամենառաջինը մարդկային փոխհարաբերություններ են փոխվում», - ասում է 4-րդ կուրսի ուսանող Սուրեն Ազիզյանը՝ ինքն իրեն ուղղելով, որ ռազմի դաշտ պիտի մեկնես արդեն այդ փոխհարաբերությունները վերանայած. «Դու պիտի պատրաստ լինես ընկերոջդ, կողքիդ կանգնածի համար կյանքդ տալ: Եթե մեկ վայրկյան տատանվես, կգոհվես դու էլ, կողքինդ էլ»: Չրույցի ընթացքում Սուրենը հիշեց նաև, թե ինչպես են իրեն օգնել մասնագիտական կարողությունները: Պատմում է, որ իր խորհրդով ու ցուցումներով էին որոշում խրամատների տեղը, աստիճաններն այնպես էին կառուցում, որպեսզի իջնել-բարձրանալն ավելի դյուրին և անվտանգ լինի. 'Մի խրամատը փորելու ընթացքում անմիջապես կողքներս ական պայթեց: Թաքնվեցինք ու ոչ մեկս չվիրավորվեց: Ասեցի՝ տեսա՞ք, բա որ ասում էի լավ խրամատ ա», - հիմա արդեն թաքուն ժպիտով պատմում է Սուրենը:

Երբ կանգնած ես թշնամուն դեմ առ դեմ, ոչինչ չես զգում, միայն ուզում ես ողջ մնալ: Սկզբում ուզում ես, հետո արդեն սովորում և, վտանգի, նեղության, վախի պայմաններում, աստիճանաբար, վարպետանում: 23-ամյա Վահագն Հովակիմյանն ասում է, որ պատերազմն էմոցիաները քարացնում է. «Արդեն գնալուց առաջ դու պիտի տրամադրվես, խեղդես բոլոր զգացմունքներդ, որպեսզի այնտեղ ավելի արդյունավետ քեզ դրսևորես: Այսօր, քաղաքացիական կյանքիս վերադառնալուց հետո, իրավիճակներն ավելի ռեալ ու սթափ եմ գնահատում, արժևորում ապրածս կյանքը», - 44 օր կռիվ մղելուց ու տուն վերադառնալուց հետո խոստովանում է Վահագնը:

'Պատմական հայրենիք Արցախը մի օր անպայման կրկին իրական կդառնա, դժվարությամբ, բայց կդառնա', - հավատացնում են տղերքը:

ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ԴԱՍ

Պատերազմը դաժան ուսուցիչ է: Եթե ընկերասիրության, պատասխանատվության, հավատի ու հայրենասիրության մասին պատկերացում կազմելու համար պիտի հարյուրավոր հաստափոր գրքեր կարդաս, ապա պատերազմի դաշտում այդ ամենը սերտում ես օրերի ընթացքում, այն էլ՝ գործնականում:

Անհնար է խոսքերով փոխանցել այն ցավն ու անգործությունը, երբ տեսնում ես, թե ինչպես է կրակն անխնա կուլ տալիս ընկերոջդ կյանքը, իսկ դու նրան ոչնչով օգնել չես կարող: Քաղաքային տնտեսություն և Էկոլոգիա ֆակուլտետի հեռակա համակարգով 3-րդ կուրսի ուսանող Սուրադ Աբրահամյանն Արցախի թեժ գծերում է եղել պատերազմի առաջին օրվանից մինչև վերջին օրը: Անպատմելի ցավով է հիշում այն բոլոր պահերը, երբ սեփական աչքերով է տեսել վիրավորված, անդամալույծ զինվորների և պատկերացրել, որ մեկ րոպե հետո ինքն էլ կարող է նույն վիճակում հայտնվել. 'Եվ այդ ցավից, թշնամու անգթությունից միանգամից մի քանի տարով մեծանում ես ու հասունանում', - ասում է Սուրադը՝ ավելացնելով, որ այդ պահից որոշում ես ամեն գնով ողջ մնալ և Աստծո կամքով ընտանիքիդ հասնել: Իսկ դրա համար կարևոր է համարում զգուշությունը և, իհարկե, ճակատագիրը: Հիմա ավելի է սառնասիրտ ու զգուշավոր է դարձել, կարողանում է դեպքերին առավել իրատեսորեն արձագանքել:

Ռաֆիկ Հարությունյանն ու Հարություն Մայիլյանը, ովքեր հեռակա համակարգով ավարտական կուրսի ուսանողներ են, Ապրիլյան քառօրյայի պատերազմի ընթացքում ժամկետային զինծառայողներ են եղել: Նորից պատերազմ էր, բայց համեմատելու ոչ մի եզրեր չեն գտնում: Ռաֆիկն առաջին իսկ օրը վիրավորում է ստացել, խոստովանում է, որ մարտի դաշտ մեկնելուց

առաջ 'կռիվ-կռիվ' ես պատկերացնում, ուզում ես կրակի հետ ուժերդ փորձել, բայց տեղում պատկերացումների գլխավայր շուռ են գալիս:



Իսկ Հարությունը, ով Հայրենիքի պաշտպանության համար կռիվ է տվել Կապանի շրջանի Դավիթ Բեկ գյուղում, պատմում է, որ թշնամին ավելի սադրող ու սպառնացող է, քան կռվող: Գյուղի քանիցս հրետակոծությունը դրա ապացույցն է. 'Նրանք անընդհատ ուզում էին ցույց տալ, որ Հայաստանը նույնպես ապահովագրված չէ, որ Հայաստանի բնակիչներին նույնպես վտանգ է սպառնում: Այդպիսի տպավորություն էր ստեղծվում':

Շուրջ 10-ն օր նույն Դավիթ Բեկ գյուղում է գտնվել նաև 4-րդ կուրսեցի Սերյոժա Պետրոսյանը, ում համար պատերազմի ընթացքը որքան էլ արյունոտ ու ցավոտ, բայց ավելի հերոսական, հիշվող ու պանծալի է եղել...

ՄԱՅԿԱՆԸ ՀԱՂԹԱԾ ԶԵՐՈՍՆԵՐԸ

Ծնունդով Ստեփանակերտից Յուրի Հայրապետյանն օրեր առաջ է դուրս գրվել հիվանդանոցից և պարզևատրվել «Արիության համար» մեդալով: Մեր համալսարանի Շինարարության ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Յուրին վիրավորում էր ստացել թևի և գլխի հատվածներում: Սեպտեմբերի 27-ին բռնկված պատերազմը նրա համար առաջինը չէր, մասնակից է եղել նաև Ապրիլյան քառօրյա պատերազմին: Հիմա, երբ ամեն ինչ թվացյալ անցյալում է, մտածում է ամուսնանալ, սակայն, սպասում է իրական խաղաղությանը: Հավատը չի կորցրել, սակայն հիասթափված է ստահող լուրերից. «Մենք դիրքում կանգնած լուրեր էինք ստանում թիկունքից, թե համացանցով կարդացել են՝ իբրև այդ դիրքը թշնամին գրավել է», – ասում է Յուրին և խոստովանում. «Հոսպիտալում պառկած մտածելու երկար ժամանակ ունեի, մարտի դաշտում մեծ էր հավանականությունս զոհվելու, անընդհատ մահը կողքովս էր անցնում, բայց դրա մասին այդ պահին չէի մտածում, որովհետև տուևս էի պաշտպանում, բայց...». այդ բայցը այն ամենացավոտ կողմն է որը նշում է մեր հերոսը. Պատմում է ու հիշում Մոնթեի խոսքերը, որ հերոսներին կենացներով չեն հիշում միայն, գործել ու նախորդների գործը շարունակել է պետք: Ասում է՝ միգուցե խաղաղ ժամանակ երկիրը մեզ չի հիշում, բայց պատերազմի ժամանակ երկրի մասին հոգալը, այնուամենայնիվ, բոլորիս պարտքն է:

Լինելով ծնունդով Արցախցի՝ իր Հայրենիքն է համարում թե՛ Արցախի, թե՛ Հայաստանի յուրաքանչյուր անկյունը և հավատացնում, որ թշնամու կրակի դիմաց այդպես էին մտածում քաջ հայորդիներից շատերը. «Հայաստանից եկած շատ տղերք անվախ ու քաջ ոգով էին կռվում, որովհետև գիտակցում էին, որ Արցախը բոլորիս տունն է»: Իր տեսած երկու պատերազմների միջև տարբերություն չի գտնում, հիմա միայն ծավալներն էին մեծ: Վստահ է, որ մի օր Նորից գեներ է վերցնելու և շարունակելու իր և մյուսների հայրերի ու պապերի կիսատ գործը...

«Այո, մենք պարվեցինք ճակատամարտը, բայց ոչ՝ պատերազմը», - վստահ է 2-րդ կուրսի ուսանող Սասուն Մկրտչյանը, ով պատերազմի օրերին եղել է Նախիջևանի սահմանին, իսկ մինչ այդ կամավորների ջոկատների հետ սնունդ և հագուստ է տեղափոխել Արցախ: Ասում է՝ միայն գիծ մարդը կարող է չվախենալ պատերազմից, չվախենալ սիրելի մարդկանց կորցնելուց, բայց Հայրենիքը կորցնելու վախն էլ, ազգասիրությունն ու եղբայրասիրությունն էլ զորավոր են և ստիպում են մոռանալ մնացյալ մյուս վախերը:



«Երբ վախը հաղթահարված է, մտածում ես միայն հաղթանակի մասին, և այդ հաղթանակը տեսնում յուրաքանչյուր դրվագում, ու հետո ցավում ես, որ կյանքի գնով ձեռք բերվածը դառնում է թշնամունք», – այս մտքերն էլ հանգիստ չեն տալիս մեր համալսարանի մյուս հերոսին՝ 3-րդ կուրսեցի Վիգեն Չոհրաբյանին: Ասում է, որ մեզ պակասում էր ոչ այնքան մարդկային ուժի և զինտեխնիկայի պակասը, այլ՝ անկազմակերպվածությունը: Բայց Վիգենն էլ հուսահատվողներից չէ:

«Կամբողջացնե՞նք մի օր մեր կիսատ Հայրենիքը» հարցի շուրջ տղաները երկար են մտածում... Պերճախոս ու հավատով լի է նրանցից Յուրիի պատասխանը. «հույս ունեմ... Մի օր հաստատ էլի Նժդեհ կամ Հայկ Նահապետ կծնվի»:

ԿՅԱՆՔԵՐ, ՈՐՈՆՔ ՆԿԻՐԵՑԻՆ ՄԵՉ ԿՅԱՆՔԵՐ...

**ՀԱՎԵՐԺ ՓԱՌՔ ՈՒ ԽՈՆԱՐՅՈՒՄ, ՄԵՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒ
ԵՐԿՐԻ ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐ**



Գևորգյան Աղասի Հակոբի - ծնվ. 2000թ.- Բաղաքային տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Հովակիմյան Միքե Աշոտի - ծնվ. 2000թ.- ճարտարապետության ֆակուլտետի ուսանող



Վարդանյան Վահե Էդիկի - ծնվ. 2000թ.- Դիզայն ֆակուլտետի ուսանող



Հարությունյան Սամվել Նորայրի - ծնվ. 2000թ.- Դիզայն ֆակուլտետի ուսանող



Հարությունյան Լյուդվիգ Արմենի - Շինարարության
ֆակուլտետի ուսանող



Գյուլամիրյան Արամ Արմանի - ծնվ. 2000թ.
Ճարտարապետության ֆակուլտետի ուսանող



Արշակյան Ֆրունզե Ռուբենի - Շինարարության ֆակուլտետի
շրջանավարտ



Օթարյան Գևորգ Վարդանի - ծնվ. 1999թ. – Բաղաքային
տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտ



Արթենյան Սիմոն Խաչիկի - ծնվ. 2001թ. - Բաղաքային
տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Ենոքյան Արտակ Սամվելի - ծնվ. 2000թ.
Ճարտարապետության ֆակուլտետի ուսանող



Մանուկյան Նարեկ Հրաչյայի - ծնվ. 2000թ Դիզայն
ֆակուլտետի ուսանող,



Ղազարյան Ազատ Վահանի - ծնվ.2000թ., Շինարարության
ֆակուլտետի ուսանող,



Ղարիբյան Իսահակ Արթուրի - ծնվ.2001թ.Կառավարման և
տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող,



Ավետիսյան Գեղամ Ալբերտի - ծնվ.2000թ., Կառավարման և
տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Նազարյան Գալուստ Մանուկի - Շինարարության
ֆակուլտետի ուսանող



Գրիգորյան Կարեն Արբենի ծնվ. 2001թ. - Կառավարման և
տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Շահրամանյան Չորիկ Վախրաթանգի - ծնվ. 2002թ.
ճարտարապետության ֆակուլտետի ուսանող



Շախինյան Արմեն Գեղամի - ծնվ. 2001թ.- Քաղաքային
տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Առուստամյան Արմեն Պավելի - ծնվ. 2001թ. –Կառավարման և
տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Գասպարյան Սարմեն Սամվելի- ծնվ. 2001թ. –
ճարտարապետության ֆակուլտետի ուսանող



Բարսեղյան Սայաթ-Նովա Վահանի - ծնվ.1996թ Զաղաքային
տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Դանիելյան Լևոն Գրիգորի - ծնվ. 2001թ. –Կառավարման և
տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Բարսեղյան Ռոբերտ Վարազդատի - ծնվ.
1998թ.Շինարարության ֆակուլտետի շրջանավարտ



Պողոսյան Իշխան Կարենի - ծնվ. 1996թ- Շինարարության
ֆակուլտետի ՇՄ-74 խմբի շրջանավարտ



Խաչատրյան Կարեն Արմենի - ծնվ. 2001թ- Քաղաքային
տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Ասատուրյան Նարեկ Վլադիմիրի - ծնվ. 2001թ.
Կառավարման և տեխնոլոգիայի ֆակուլտետի ուսանող



Ալեքսանյան Արման Վազգենի - ծնվ. 2001թ. Քաղաքային
տնտեսության և Էկոլոգիայի ֆակուլտետի ուսանող

ԿՅԱՆՔԵՐ, ՈՐՈՆՔ ՆՎԻՐԵՑԻՆ ՄԵՁ ԿՅԱՆՔԵՐ...